Ճանաչել գիմաստութիւն եւ գխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

18 (411)
30.05.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԴՊՐՈՑ, ՈՂՋՈՒՅՆ, ՆՈՐ ԿՅԱՆՔ

Դպրոցական Վերջին զանգը ավանդաբար նշվում է տոնական հնչողությամբ: Օրվա հերոսների՝ շրջանավարտների ուրախությունն ու հուզմունքը նրանց ընտանիքների, ուսուցիչների հետ միասին կիսում է հասարակությունը: Վերջին զանգի արարողությանը մասնակցում են իշխանության թևերի, հասարակական, քաղաքական ոլորտների ներկայացուցիչներ: Կյանք մտնող նոր սերնդից յուրաքանչյուրի ակնկալիքը մեծ է:

Մայիսի 23-ին Արցախի հանրակրթական դպրոցների 12-րդ դասարանի 1255 շրջանավարտներ հրաժեշտ տվեցին հարազատ կրթօջախներին: Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի Վերջին զանգին ներկա էին ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, պետական այլ այրեր: Որպես ավագ դպրոց՝ կրթօջախը տվեց իր չորրորդ թողարկումը: Ձիևորական նվագախմբի հնչյունների ներքո, ծափողջյուններով հրապարակ են մտնում շրջանավարտները՝ հումանիտար և բնագիտամաթեմատիկական վեց հոսքերի 165 աշակերտները, որոնց հոտընկայս են դիմավորում պատվավոր հյուրերը: Հաղորդավարը մեկ առ մեկ նշում է նրանց ձեռքբերումները. թվարկումը հաճելիորեն երկար է տևում: Նրանց մեջ են առարկայական օլիմպիադաների, ստեղծագործական մրցույթների, մարզամշակութային ոլորտների մրցանակակիրները, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում հաղթողները: Բոլորի դեմքերին փայլում են ուրախությունն ու հպարտությունը:

Պահն ազդեցիկ էր: Հանդիսավորությամբ հրապարակ է բերվում ԼՂՀ պետական դրոշը, հնչում է Արցախի հիմնը: Բոլորը ձայնակցում են: Հարգանքի ու երախտագիտության առաջին խոսքն ուղղվում է նրանց, ովքեր իրենց կյանքի գնով ապահովեցին այսօրվա խաղաղ օրը: Շրջանավարտները ծաղկաշղթա են տեղադրում Փառքի սրահում: Ոչինչ չի մոռացվել…Խորհրդանշական զանգի կողքին «Հիշում եմ և պահանջում» պաստառն է: Շրջանավարտները երգում են թախծալի «Կիլիկիա» երգը, որին անմիջապես հաջորդում է հպարտություն ներշնչող «Հայաստան»-ը: Ամեն ինչ հասկանալի է:

Դպրոցի տնօրեն Աիդա Գիրգորյանը շնորհավորում է շրջանավարտներին՝ Վերջին դասի կապակցությամբ: Նրանք փակում են դպրոցական կյանքի էջը և բացում նոր էջ, որտեղ նրանցից պահանջվելու է լինել ավելի լուրջ, ավելի պատասխանատու: Տնօրենը շնորհակալություն է հայտնում շրջանավարտներին այն բանի համար, որ որպես ավագ դպրոց ընտրել են այս կրթօջախը, բարձր են պահել նրա պատիվը տարբեր մրցույթներում, հաջողություն մաղթեց առաջիկա քննություններում՝ պատգամելով հպարտ կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի լինելու բարձր կոչումը:

ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանը անթաքույց խանդաղատանքով արտահայտվեց շրջանավարտների մասին՝ ասելով, որ որևէ մի երկրում չես գտնի այսքան գեղեցիկ պատանիներ: Նրան նաև ոգևորել էին շրջանավարտների ձեռքբերումները: Նա հիշեց 1990 թվականը, երբ ինքն էր ավարտում դպրոցը: Հայոց լեզվի քննության թեման էր «Կաթիդ փարան չմոռանաս», որի իմաստն այն է, որ զավակը պետք է իր ամբողջ կյանքում կատարի պարտքը ծնողի հանդեպ: Նաև հիշեցրեց, թե երկրի համար ինչ ծանր պայմաններում են այսօրվա շրջանավարտները կրթվել: «Բայց հայրենիքը ամեն ինչ արել է, որ ունենաք նորմալ պայմաններ: Միշտ հիշեք, որ ձեր հաջողությունները պայմանավորված են հայրենիքով»,-ասաց նա:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը, ի դեմս հ. 11 դպրոցի շրջանավարտների, շնորհավորեց Արցախի, մայր Հայաստանի և Սփյուռքի կրթօջախներին՝ 2014-2015 ուսումնական տարվա Վերջին դասի կապակցությամբ: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր ուսուցիչներին՝ արդի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ պատանիներ կյանք ուղարկելու համար, որոնք պատրաստ են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ի սպաս դնել մեր երկրի զարգացմանը:

ԼՂՀ Աժ պատգամավոր, Արցախի հերոս Ժաննա Գալստյանը շրջանավարտներին ուղղված իր խոսքում մաղթեց, որ նրանք ունենան կյանքի դժվարությունները հաղթահարելու արցախցու բոլոր համառությունը և միշտ տոգորված լինեն հայրենիքի սիրով:

Շրջանավարտների դասղեկների անունից Իրա Սարինյանը վստահություն հայտնեց, որ նրանք իրենց ստացած գիտելիքներով, կարողություններով, հայրենասիրությամբ ու պահանջատիրությամբ ակնառու ներդրում կունենան մեր ժողովրդի ու հայրենիքի գալիք հաղթանակներում:

Շրջանավարտի պապ, հանրապետության վաստակավոր մանկավարժ, Արցախյան շարժման առաջամարտիկ էմիլ Բալայանը իր թոռան օրինակով հաճելիորեն զարմացած էր այսօրվա մանկավարժների նորարարությամբ, նոր սերնդի ինքնուրույն մտածողությամբ: Պատգամեց իր սերնդի կողմից ձեռք բերված մեր երկրի անկախությունը ամուր պահպանել:

Մթնոլորտը լի էր փոխադարձ սիրո խոստովանության պահերով: Աշակերտական կոլեկտիվների անունից շրջանավարտները իրենց երախտագիտությունը հայտնեցին ուսուցիչներին՝ իրենց կատարած աշխատանքի համար՝ ասելով, որ նրանք իրենց համար եղել են փարոս և ուղենիշ, որ նրանք առաջնորդել են իրենց գիտելիքների խորացման դժվարին ճանապարհին, միասին հաղթահարել են բազմաթիվ խոչընդոտներ, ուրախացել ու հպարտացել իրենց հաջողություններով:

Հանդիսության յուրաքանչյուր դրվագ համեմված էր հայրենասիրական երգով-պարով, իսկ ամենահուզիչը դպրոցական վալսն էր, որն ավանդաբար դարձել է Վերջին զանգի խորհրդանիշներից մեկը: Բայց նոր սերունդը նաև իր սեփական խորհրդանիշն ունի, և շրջանավարտներից մեկի հայրենասիրական երգի զիլ հնչյունների ներքո հրապարակում ծայր է առնում ազգային շուրջպարը:

Միջոցառման եզրափակիչ ակորդը տալիս են Վերջին զանգի հնչյունները՝ ազդարարելով՝.

- Ցտեսությո՜ւն, դպրոց, ողջու՜յն նոր կյանք:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ-2015

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

...Եվ այսպես, գնում ենք մեզ գտած,
Երգելով մեր հայրենն ու տաղը,
Եվ մեր այս երթի մեջ սրընթաց
Մեզ հետ են մեր երեկն ու վաղը.....

Վերջին զանգ: Յուրաքանչյուրս ապրել է այդ պահը, այդ սպասված զանգ քաղցր, բայց և ցավով հնչած ղողանջները, որ իրենց հետ բերում են հակասական զգացումներ՝ ուրախության և տխրության: Օրվան յուրահատուկ ձևով են պատրաստվում բոլորը, տոնականորեն, քանի որ յուրաքանչյուրը դրա մեջ իր բաժին տոնն է տեսնում: Այդ օրը միմյանց շնորհավորում են ուսուցիչներն ու աշակերտները, ծնողները, քանի որ այդ պահին հասնելու համար յուրաքանչյուրն իր ներդրումն է կատարել, իր ավանդն ունի նրանում:

Այս տարի Վերջին զանգի տոնակատարությունը Մարտունու շրջանում տեղի ունեցավ 36 դպրոցների 9-րդ դասարանի 230 և 12-րդ դասարանի 224 սովորողների համար:

Մարտունու Նելսոն Ստեփանյանի անվան հ.1 հոսքային միջնակարգ դպրոցը տոնական տրամադրության ու բազմերանգ գույների մեջ էր: 2014-2015 ուսումնական տարում դպրոցը թողարկում էր հումանիտար, բնագիտական և ընդհանուր հոսքերի երեք դասարան՝ 44 շրջանավարտներով: Ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալներ Ս.Սեյրանյանը, Է.Բարսեղյանը, Արցախի թեմի փոխառաջնորդ Տեր Սահակ վարդապետ Շաքարյանը, Մարտունու քաղաքապետ Մ.Խաչատրյանը և այլ պաշտոնատար անձինք, հյուրեր, շրջանավարտների ծնողներ, բարեկամներ: Յուրաքանչյուրը եկել էր իր սրտի խոսքն ասելու, բարի, կանաչ ճանապարհ մաղթելու հասունության և ինքնուրույնության ուղին բռնած երեխաներին:

Մինչ բուն միջոցառման սկսելը՝ շրջանավարտները ծաղիկներ խոնարհեցին Նելսոն Ստեփանյանի կիսանդրու, Մավր Օհանյանի խաչքար-հուշաղբյուրի և դպրոցի Փառքի սրահի պատվանդաններին՝ որպես հարգանքի, խոնարհումի և երախտիքի արտահայտություն:

Տոնական միջոցառմանը շնորհավորանքի խոսքով հանդես եկան ավարտական դասարանների դասղեկներ Լ.Ղազարյանը, Ի.Հայրապետյանը և Կ.Գասպարյանը: Նրանք սիրով ու գորովանքով ներկայացրին իրենց սաներին, որոնց համար ուսուցիչ լինելուց բացի լավ ընկեր էին, բարի խորհրդատու, ուղղություն տվող, անհրաժեշտության դեպքում՝ նաև նախատող ու խիստ դաստիարակ:

Դպրոցի տնօրեն Կ.Պողոսյանն իր շնորհավորանքի խոսքում մանրամասն ներկայացրեց ուսումնական տարում կատարված աշխատանքները, ինչպես նաև շրջանային և հանրապետական օլիմպիադաներում ունեցած ձեռքբերումները, որտեղ զգալի է շրջանավարտների դերը և օլիմպիադաներում առաջնային տեղեր գրաված ու ակտիվ մասնակցություն ունեցած երեխաներին հանձնեց համապատասխան դիպլոմներ և պատվոգրեր: Մաղթեց նրանց կյանքում հանդիպող յուրաքանչյուր դժվարություն հաղթահարել արժանապատվորեն: Դպրոցական վերջին զանգը ավետիս համարեց և հույս հայտնեց, որ դպրոցի ուսուցիչների և տնօրինության բոլոր հույսերն իրենց հետ կապված՝ անպայման կարդարացնեն:

Շրջվարչակազմի ղեկավար Ն.Սողոմոնյանի՝ շրջանավարտներին ուղղված շնորհավորանքի ուղերձը կարդաց նրա տեղակալ Ս.Սեյրանյանը. «Դուք այն սերունդն եք, որ ծնվել եք ազատագրված հայրենիքում, քայլել ու հասակ եք առել արդեն անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Հրաժեշտ տալով դպրոցական կյանքին՝ դուք բախում եք կյանքի երկրորդ փուլի դռները, որոնք, վստահ եմ, ոչ հեշտությամբ, բայց հաստատ կբացվեն ձեր առաջ: Սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ դպրոցն ավարտելու և մեծ կյանքի հորձանուտ մտնելու առթիվ: Այսօրվանից սկսվում է ձեր կյանքի նոր շրջանը, և այն, ինչ ստացել եք դպրոցում՝ որպես գիտելիք, ունակություն և կարողություն, գալիք տարիներին զգալու եք, որ դրանք կարևոր են եղել: Այսօր տոն է նաև ձեր ուսուցիչների համար: Նրանց անխոնջ աշխատանքի շնորհիվ դուք կյանք եք մտնում անհրաժեշտ գիտելիքներ ստացած և լի եք վճռականությամբ՝ հաղթահարելու ցանկացած խոչընդոտ: Դպրոցական Վերջին զանգի կապակցությամբ շնորհավորում եմ նաև ձեր ծնողներին: Այս հիշարժան օրը ձեզ կանաչ ճանապարհ ու երազանքների իրականացում եմ մաղթում: Մաղթում եմ, որ արժանի լինեք այսօր մեր երկրի սահմանները պաշտպանող և Արցախի պատիվը բարձր պահող սերնդին: Համոզված եմ, որ դուք կկարողանաք պատվով կատարել և՛ պետականաշինության, և՛ մեր երկրի տնտեսության զարգացման գործը: Վստահ եմ, որ կլինեք ձեր հայրերի, եղբայրների արժանի հետնորդները, անառիկ կպահեք հայրենիքի սահմանները: Ձեր շնորհիվ ավելի կհարստանա ու կգեղեցկանա մեր ազատ,անկախ հայրենիքը»,- նշված էր ուղերձում: Ս.Սեյրանյանն իր կողմից ևս շնորհավորեց օրվա հերոսներին՝ մաղթելով, որ ինչ ճանապարհ ընտրելու լինեն՝ նրանց ուղեկցի հաջողությունը:

Շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքերով ելույթներ ունեցան նաև Մարտունու քաղաքապետ Մ.Խաչատրյանը, շրջանավարտների առաջին ուսուցիչներ Մ.Մանգասարյանը, Գ.Գրիգորյանը, շրջանավարտի ծնող, շրջանի տարածքում տեղակայված զորամասերից մեկի հրամանատարի ԱՀՏԱԳ տեղակալ Մ.Սարգյանը, Պաշտպանության բանակի ավագ սերժանտ Ա.Խաչատրյանը: Յուրաքանչյուր խոսք շաղախված էր ապագայի հանդեպ հավատի ու պարտավորեցման խոսքերով: Հասուն կյանքը մարդուց պահանջում է լինել պատասխանատու, ավելի լուրջ և գիտակից, ուստի կյանքի նոր փուլ մտնելով՝ կարևոր է, որ լինեն նրան պատրաստ ու գիտակից: Բայց ամենակարևորը հայրենապաշտությունն է, որ պիտի առաջնորդի յուրաքանչյուրին՝ լինել սեփական երկրի, ժողովրդի պաշտպանն ու ապագան կերտողը, ապահով ապագայի ամուր հենարանը:

Շրջանավարտներին բարեմաղթանքի և օրհնանքի խոսք ասաց Տեր Սահակ Վարդապետ Շաքարյանը: Նշեց, որ 21-րդ դարը մեր թողարկվող սերունդը կարող է իր գիտելիքների և կարողությունների շնորհիվ հայ ժողովրդի համար դարձնել ոսկեդար, ինչպես Մեսրոպ Մաշտոցը ժամանակին՝ հայոց տառերի գյուտով: Կա մեծ պատասխանատվություն և պարտավորություն սեփական երկրի ու ժողովրդի առաջ, և հույս հայտնեց, որ ունեցած հարուստ գիտելիքներով կկարողանան պատվով կատարել այն:

Այդ օրը շնորհավորելու էին եկել նաև դպրոցը 5, 10, 15, 20 տարի առաջ ավարտած շրջանավարտները, ովքեր իրենց կարոտի ու բարեմաղթանքի խոսքերն ասելուց հետո նվերներ հանձնեցին հարազատ դպրոցին:

Վերջում Նելսոն Ստեփանյանի կիսանդրու մոտ շրջանավարտներին դիմավորեցին և շնորհավորանքի քաղցր խոսքերով, ծաղիկներով ու նվերներով էլ ավելի ջերմացրին նրանց օրը ծնողները, հարազատները: Ու «Քոչարու» նվագի տակ շուրջպար բռնեցին:

Բոլորի համար էլ դպրոցական Վերջին զանգը նոր կյանքի մեկնարկ է: Թող այն մեր շրջանավարտների համար լինի հաղթանակի, հաջողությունների, երջանկության, սիրո, հոգու բերկրանքի մեկնարկ: Կյանքն առանց դժվարությունների անհնար է պատկերացնել, ուստի, եթե պիտի մտահոգվեն, թող միայն մանրուքներից մտահոգվեն, թող դրանք լինեն թույլ ցնցումների նման, որ կանխում են մեծ ավերածությունները:

Սիրելի շրջանավարտներ, բարի, անփորձանք, երջանիկ, թեթև երթ՝ դեպի հասուն և նոր կյանք:

Կարինե ԴԱԴԱՄՅԱՆ

ԹԵՎԱԿՈԽԵԼՈՎ ՆՈՐ ՀԱՆԳՐՎԱՆ

Վերջին զանգ...Արցունքներ, հրաժեշտի խոսքեր, անափ կարոտ, բայց նաև անթաքույց ուրախություն, սրտաբուխ ծիծաղ, հմայիչ ժպիտներ, գեղեցիկ ու սրտառուչ բարեմաղթանքի խոսքեր: Ե՛վ տխրություն, և՛ ուրախություն՝ այս ամենը միախառնվել էին իրար և կազմել մի հրաշք երևույթ, որին սպասում է ամեն մի դպրոցական իր ուսումնառության ողջ ընթացքում: Սպասում անհամբեր, բայց երբ գալիս է հրաժեշտի պահը, տխրում է անսահման, մինչև անգամ արցունքոտվում են աչքերը: Թախիծով համակվում ենք նաև մենք՝ ուսուցիչներս, քանզի հրաժեշտ ենք տալիս մի սերնդի ևս, ամեն օր չենք տեսնելու նրանց պայծառ ու լուսաշող հայացքները, որոնցով ոգևորվում էինք, դրական լիցքեր ստանում:

Վերջին զանգ...Խստապահանջ ուսուցիչներ, երկար թվացող դասաժամեր, կարճ դասամիջոցներ....այս ամենն այլ կերպ է ընկալվում այդ օրը: Այն ուղղորդում է դեպի նոր կյանք: Ամենասպասված ու ամենասիրելի տոն, որ սկիզբ է դնում նոր հույսերի, դժվարությունների ու նոր ձեռքբերումների: Հենց այդ օրն են աշակերտներն ամփոփում անցած տարիների բացթողումները և հասկանում, որ իրենց առջև ավելի պատասխանատու շրջան է բացվում, որից մեծապես կախված է նրանց ապագան: Խորհրդանշական օր նաև ծնողների և ուսուցիչների համար:

Վերջին զանգ.... Պատասխանատու պահ և՛ ուսուցիչների, և՛ ծնողների, և՛ աշակերտների համար: Ու այդ օրվա միջոցառմանը Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի տնօրինությունը՝ փոխտնօրեն Ն. Աբրահամյանի գլխավորությամբ, և հիններորդ դասարանի դասղեկ Վ. Ավետիսյանը նախապատրաստվել էին ամենայն լրջությամբ:

Միջոցառումը կազմակերպվեց նորակառույց դպրոցի բակում, որը զարդարված էր տոնականորեն. ամենուր փուչիկներ, ծաղիկներ, Վերջին զանգը խորհրդանշող պաստառներ, դրոշներ, խորհրդանշական զանգեր: Հրավիրված էին հյուրեր և՛ ԼՂՀ ԿԳ նախարարությունից, և՛ քաղաքապետարանի կրթության ու սպորտի բաժնից, և՛ ԼՂՀ ՊԲ-ից, որոնք իրենց ներկայությամբ ու բարեմաղթանքի խորիմաստ խոսքերով առավել տոնական ու հանդիսավոր տեսք տվեցին միջոցառմանը: Հուզիչ էր դպրոցի տնօրեն Վ.Ղահրամանյանի խոսքը. «Այսօր ձեր կյանքում հիշարժան օր է, դուք հրաժեշտ եք տալիս հարազատ կրթօջախին, սիրելի ուսուցիչներին և դասընկերներին: Տարիներ շարունակ դպրոցը ձեզ համար եղել է կրթման, դաստիարակման ու արժեքների ձևավորման յուրատեսակ դարբնոց: Ուսումնառության տարիների ընթացքում դուք շրջապատված եք եղել մանկավարժների ջերմությամբ, ընկերների մաքուր և անաղարտ հարաբերություններով, ձեզ սովորեցրել են լինել ազնիվ, բանիմաց, երկրին ու հայրենիքին նվիրված քաղաքացիներ: Վստահ եմ, որ դուք կատարելու եք ճիշտ կյանքի ընտրություն և դառնալու եք մեր ազատ հայրենիքի իրավատեր քաղաքացիներ և միասին կառուցելու ենք մեր երազած Արցախը»: Այնուհետև խոսք տրվեց օրվա հերոսներին՝ շրջանավարտներին: Հանդիսությանը աշակերտները պատրաստվել էին երկար, քանզի հրաժեշտ էին տալու մի կրթօջախի, որը ուսումնական հաստատությունից զատ ջերմ օրրան է եղել իրենց համար, ուղեկցել է դեպի գիտության անդաստանները, կրթել սերունդներ: Իրողությունը, արդարև, հուզիչ էր և հիշարժան. դպրոցում է ձևավորվել յուրաքանչյուր աշակերտի կենսագրության կարևոր էջը, կյանքի ուղին՝ լեցուն բազմաթիվ ձեռքբերումներով և նվաճումներով, զգացմունքներով և դպրոցական անմոռաց հուշերով: Բոլորի սրտում անթեղված հուշեր էին, բաժանումի ու կարոտի լուռ զգացողություններ:

Միջոցառման ընթացքում հնչեցին գովեստի ու գնահատանքի բազում խոսքեր՝ կապված սիրելի ուսուցիչների և տնօրենի հետ: Մեծարվեց մանկավարժի կոչումը և նրա առաքելությունը կրթության բնագավառում: Դպրոցական առօրյայից քաղված հումորային դրվագները արարողությանը աշխույժ երանգ հաղորդեցին: Աշակերտական անմեղ կատակները ծածկվել էին անցյալի մշուշով. նրանց անթաքույց ժպիտները և գորովալից հայացքները միայն երախտագիտության զգացմունքներ էին արտացոլում և առավել հստակ գիտակցում «ուսուցիչ» բառի վեհությունը:

Հպարտ կերտելով իր տարեգրության լուսավոր էջը՝ դպրոցը մեկ սերունդ ևս ճանապարհեց դեպի հասուն կյանք՝ ժառանգություն թողնելով նվիրյալ մանկավարժների գիտելիքներն ու խորհուրդները, դասերը, որոնք ճշգրիտ ուղեցույց կլինեն կյանքի հարափոփոխ երթում:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ստեփանակերտի հ.6 հիմն. դպրոցի փոխտնօրեն

ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԱՊԱՏՈՒՄ

Այս անգամ Վերջին զանգը Խնապատի միջնակարգ դպրոցում հնչեց նոր բովանդակությամբ: Ավանդական դարձած հանդիսությունը «խախտեց» ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ դասախոս, Խնապատցի Ալեքսանդր Խաչատրյանը, որը համառոտ ներկայացրեց մոսկվաբնակ, ծագումով արցախցի Ալեքսանդր Մնացականյանի մարդասիրական նախաձեռնության մասին: Վերջինս գիտության մեծ սպասավոր է ու անխոնջ մշակ, որն ընկերական ջերմ կապեր է ունեցել Ալ. Խաչատրյանի վաղամեռիկ եղբոր՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Յուրի Բաղդասարյանի հետ, և այժմ, երբ արդեն չկա իր հավատարիմ ընկերը, որոշել է նրա հիշատակն անմահացնել մի հրաշալի նախաձեռնությամբ՝ Յուրի Մովսեսի Բաղդասարյանի անվան ամենամյա մրցանակ շնորհել խնապատցի այն աշակերտին, ով առանձնահատուկ ընդունակություններ կունենա ֆիզիկա և մաթեմատիկա առարկաների նկատմամբ, հաջողություններ կգրանցի առարկայական օլիմպիադաներում և այդ առարկաներից այլ մրցույթներում:

Նախաձեռնությունը նվիրված էր Խնապատի միջնակարգ դպրոցի լավագույն շրջանավարտ Յուրի Բաղդասարյանի՝ դպրոցն ավարտելու 50-րդ տարեդարձին: Նշենք, որ Յուրի Բաղդասարյանը դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը, ասպիրանտուրան ավարտել Մոսկվայում և դասավանդում էր այնտեղի բուհերից մեկում:

Յուրի Բաղդասարյանի հիշատակին նվիրված առաջին մրցանակը ստանալու պատվին արժանացավ 12-րդ դասարանի շրջանավարտ Անի Բեգլարյանը, ով դպրոցականների 2014-2015 ուսումնական տարվա ֆիզիկայի առարկայական օլիմպիադայում, շրջանային փուլում հաղթելով, մասնակցել է հանրապետական փուլին: Մրցանակը՝ 200 ԱՄՆ դոլար, նրան անձամբ հանձնեց Ալեքսանդր Խաչատրյանը:

Եվ այսպես, Խնապատի միջնակարգ դպրոցում մի նոր, գեղեցիկ ավանդույթի սկիզբը դրվեց, որն անպայման կխթանի սովորողների ֆիզիկամաթեմատիկական գիտելիքների զարգացումը:

Ս. ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԹԻՄԸ՝ 3-ՐԴ ՏԱՐԻՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՀԱՂԹՈՂ

Մայիսի 18-21-ը Երևանի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում անցկացվեց 2014-2015 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի ՀՀ մարզային փուլը նախնական զինվորական պատրաստությունից: ՀՀ բոլոր մարզերի հետ միասին մասնակցում էր Արցախցի թիմը՝ ընդհանուր 12 թիմ:

Դպրոցական այս օլիմպիադան Հայաստանում անց է կացվում չորրորդ տարին, որին Արցախը մասնակցում է երրորդ անգամ:

Յոթ հոգուց բաղկացած Արցախի թիմում ընդգրկված էին երեք տղա և չորս աղջիկ: Թիմերը հանդես եկան հետևյալ մրցածևերում՝ թեստային աշխատանք, շարային պատրաստություն, Կալաշնիկով ինքնաձիգի ոչ լրիվ քանդում և հավաքում, հրաձգություն վարժասարքից, արգելագոտու հաղթահարում:

Արցախի հավաքականը, երեք թիմային և 8 անհատական մրցածևերում գրավելով առաջին տեղը, ընդհանուր արդյունքներով երրորդ տարին անընդմեջ դարձավ օլիմպիադայի հաղթող՝ արժանանալով գավաթի և առանձին մրցածևերից՝ պատվոգրերի:

Նշենք, որ Արցախի թիմը մարզել և ղեկավարել են զինղեկներ, մայոր Արսեն Հարությունյանը(հ. 5 դպրոց) և ավագ լեյտենանտ Վարուժան Աղաջանյանը(հ. 10 դպրոց):

Սեփ. լրատվություն

ՄԵԾԱՐՎԵՑԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Մայիսի 26-ին Մարտունու մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ ավանդական դարձած մեծարման միջոցառում՝ նվիրված շրջանի 2015թ. առարկայական օլիմպիադաներում, մշակութային, մարզական ոլորտներում աչքի ընկած օժտված երեխաներին և նրանց ուսուցիչներին: Ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալներ Ս.Սեյրանյանը, Է.Բարսեղյանը, գործարարներ:

Ներկաներին ուղղված շնորհավորանքի և շնորհակալության խոսքեր ուղղեցին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Ս.Սեյրանյանը, աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զ. Ղուլյանը: Գիտելիքը հայի համար միշտ էլ եղել ու մնում է ամենամեծ հարստությունը: Ուստի, այսօր ավելի քան երբևէ, մենք պետք ունենք այդ հարստության ավելացման ու բազմապատկման, ինչը կլինի մեզ ուղղված բոլոր մարտահրավերիներին պատասխան տալու լավագույն հնարավորությունը, մեր երկրի ու ժողովրդի ապագան հուսալի և բարգավաճ տեսնելու մեծ երաշխիքը:

Մեկ առ մեկ մեծարվեցին և պարգևատրվեցին բոլոր մրցանակային տեղեր զբաղեցրածներն ու նրանց ուսուցիչները, որոնց անունները սիրով ներկայացնում եմ՝ ակնկալելով, որ հաջորդ տարիներին այդ շարքը շատ ավելի ծավալուն կլինի: Պարգևատրումների արժանացան դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում հայոց եկեղեցու պատմություն առարկայից 1-ին կարգի և ՀՀ եզրափակիչ փուլի 3-րդ կարգի դիպլոմների արժանացած՝ Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Արիաննա Սարգսյանն ու նրա ուսուցչուհի Լուսինե Բաղդասարյանը, հանրապետական փուլի 1-ին կարգի դիպլոմակիրներ, Բերդաշենի միջնակարգ դպրոցի աշակերտներ Գրիգոր Սիմոնյանը, Վահագն Բաբայանը, Արգինե Սողոմոնյանը և նրանց ուսուցիչ Արթուր Սողոմոնյանը, որոնց շնորհիվ Բերդաշենի դպրոցի թիմը ԼՂՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայում ճանաչվել է հաղթող,

«Մշակութային խաչմերուկ» մրցույթի հանրապետական փուլում «Լավագույն երգ» անվանակարգում 1-ին տեղ գրաված՝ Մարտունու Արամ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի սան Միքայել Մայիլյանը և նրա դասատու Զարինե Մուսայելյանը, հանրապետական փուլում պատմություն առարկայից 2-րդ կարգի դիպլոմի, ՀՀ եզրափակիչ փուլում գովասանագրի արժանացած՝ Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Գագիկ Պետրոսյանը և նրա ուսուցչուհի Վեհանուշ Գաբրիելյանը, հանրապետական փուլի 2-րդ կարգի դիպլոմակիր, Թաղավարդի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Քարամյանը և նրա ուսուցիչ Զավեն Բաղդասարյանը, օլիմպիադայի հանրապետական փուլում ռուսաց լեզու առարկայից 2-րդ կարգի դիպլոմի արժանացած՝ Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մարիա Բարսեղյանը և նրա ուսուցչուհի Էմմա Բաբայանը, «Մշակութային խաչմերուկ» մրցույթի հանրապետական փուլում «Արցախյան բառ ու բան» անվանակարգում 1-ին տեղը գրաված՝ Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի աշակերտներ Անժելիկա Սահակյանը, Դավիթ Անտոնյանը և Համլետ Հովհաննիսյանը ու Ճարտարի մարզամշակութային պալատի գեղմասվար Վիկտորյա Պետրոսյանը, հանրապետական փուլում հայոց եկեղեցու պատմություն առարկայից 3-րդ կարգի դիպլոմակիր և ՀՀ եզրափակիչ փուլի գովասանագրի արժանացած՝ Խնուշինակի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Էդգար Դոլուխանյանը և նրա ուսուցչուհի Նարինե Ղազարյանը, կենսաբանություն առարկայից հանրապետական փուլի 3-րդ կարգի դիպլոմակիր և ՀՀ եզրափակիչ փուլում գովասանագրի արժանացած՝ Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Բաղդասարյանը և նրա ուսուցչուհի Ռիտա Եսայանը, հայոց լեզու առարկայից հանրապետական փուլի 3-րդ կարգի դիպլոմակիրներ՝ Սպիտակաշենի միջնակարգ դպրոցի աշակերտուհիներ Մերի Բալայանը, Անի Հայրապետյանը և նրանց ուսուցչուհի Լուսինե Եսայանը, հանրապետական փուլում պատմություն առարկայից 3-րդ կարգի դիպլոմակիր՝ Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Հարությունյանը և նրա ուսուցչուհի Լուսինե Սաֆարյանը, հանրապետական փուլում նախնական զինվորական պատրաստություն առարկայից 3-րդ կարգի դիպլոմի արժանացած՝ Հերհերի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Հարությունյանը և նրա ուսուցիչ Հրայր Բաղդասարյանը, հանրապետական փուլում նախնական զինվորական պատրաստություն առարկայից 3-րդ կարգի դիպլոմակիր՝ Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Միրզաջանյանը և նրա ուսուցիչ Արամ Խաչատրյանը, հանրապետական փուլում նախնական զինվորական պատրաստություն առարկայից 3-րդ կարգի դիպլոմակիր՝ Թաղավարդի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Մարատ Մուսայելյանը և նրա ուսուցիչ Զավեն Բաղդասարյանը, «Մշակութային խաչմերուկ» մրցույթի հանրապետական փուլի «Լավագույն գործիքային կատարում» անվանակարգում 1-ին տեղը գրաված՝ Մարտունու արհեստագործական ուսումնարանի սան Կարեն Վարդանյանը և նրա ուսուցիչ, Նորշենի ակումբավար Աննա Խաչատրյանը:

Երեխաներին և ուսուցիչներին նվերներ ու համապատասխան դիպլոմներ, պատվոգրեր, ծաղիկներ հանձնեցին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալներ Ս.Սեյրանյանը, Է.Բարսեղյանը, Զ.Ղուլյանը, բարերարներ՝ «Տնջրի-2000» ՍՊԸ տնօրեն Հայասեր Գասպարյանը, «Սանասար» ՍՊԸ տնօրեն Սամվել Ավանեսյանը, «Խոնաշեն» ՍՊԸ տնօրեն Էդուարդ Ղազարյանը:

Միջոցառումն իրոք որ լուսավոր ու գեղեցիկ առիթ էր ինտելեկտի ու հնարավորությունների լավագույն դրսևորումների գնահատման և մասսայականացման համար:

Կ.ԴԱԴԱՄՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ԵՎՍ ՄԵԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏ. ԻՆՉՈ՞Վ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԸ

Ավարտվեց ևս մեկ՝ 2014-2015 ուսումնական տարին: Ուստարում կատարվածի, անելիքների և առավելապես աշխատատար ու պատասխանատու ժամանակահատվածի վերաբերյալ հարցազրույց ունեցանք Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պետ **Կառլեն ՄԱՐԳԱՐՅԱՆԻ** հետ:

- Պարոն Մարգարյան, ի՞նչ տվեց 2014-2015 ուսումնական տարին:

- Այն, որ վերջին տարիներին հանրակրթական դպրոցներում գործում են 6 տարեկանների 6-ժամյա և 9-ժամյա նախադպրոցական խմբեր, արդեն այս տարվանից կտա իր դրական արդյունքը, քանզի նոր ուսումնականում մայրաքաղաքում կունենանք ավելի քան 950 առաջին դասարանցի: Նախադպրոցական կրթության բնագավառում տարին որոշակիորեն բարեհաջող էր այն առումով, որ Ստեփանակերտում բացվեց հ.4 պետական մանկապարտեզը՝ առայժմ 1 խմբով, սակայն աշխատանքներ են տարվում հարակից շենքի վերակառուցման և արդի չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ, որից հետո մանկապարտեզը կունենա 3-4 խումբ: Ավելացնենք, որ մոտ օրերս փոքրիկների առջև իր դռները կբացի նաև հ. 5 մանկապարտեզը, որը կգործի 3-4 խմբով: Մինչև նոր ուսումնականի սկիզբը շահագործման կհանձնվի ևս մեկ՝ 2 խմբանոց մանկապարտեզ: Ասել է թե՝ ուսումնական տարում նախադպրոցական հաստատության ցանցում ու առանձնապես՝ աշխարհագրության ընդլայնման տեսակետից որոշակի աշխատանքներ կատարվել են: Նոր բացված մանկապարտեզներն ապահովված են ժամանակակից գույքով:

Հանրակրթության բնագավառում. 2014-15 ուստարին հ. 1 հիմնական դպրոցը սկսեց ժամանակակից պահանջներին համապատասխան բարձրակարգ շենքում: Աշակերտների առջև իր դռները բացեց նաև հ. 6 նորակառույց դպրոցը: Փաստորեն մայրաքաղաքում 2 հանրակրթական դպրոցների շենքային պայմանները լիովին բավարարվեցին: Այս ուսումնականի վերջին վերանորոգման աշխատանքներ իրականացվեցին նաև հ. 9 հիմնական դպրոցում, որտեղ դրա կարիքը խիստ զգացվում էր:

Իրավական տեսակետից եթե խոսելու լինենք, հարկ է նշել, որ այս ուսումնականում հանրակրթական բոլոր դպրոցները վերածվեցին ՊՈԱԿ-ների: Իրավական դաշտում կատարվեց զգալի աշխատանք: Ե՛վ դպրոցի կառավարման, և՛ գործունեության ընթացքավորման աշխատանքներին, բացի դպրոցների գործադիր տնօրեններից, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնից ու ԿԳ նախարարությունից, ղեկավարման կազմակերպման գործում ավելացավ ևս մեկ օղակ՝ խորհուրդը, որի նպատակային ու արդյունավետ աշխատանքն առանձնակի կնպաստի ուսումնական ընթացքի և ամբողջությամբ՝ դպրոցի կառավարման գործընթացի ավելի թափանցիկ ու նպատակային կազմակերպմանը:

-Իսկ ի՞նչ է կատարվել աշակերտների կրթության և դաստիարակության ուղղությամբ:

- Այս առումով հստակ կարելի է փաստել, որ բարձր մակարդակով իրականացվել են բոլոր ավանդական միջոցառումները, որոնց կողքին ավելացել են նորերը:

«Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն գիտնական», «Տարվա լավագույն դասվար» մրցույթներն անցել են միանգամայն կազմակերպված՝ նպաստելով ուսուցիչ-անհատի որակական աստիճանի բարձրացման և ուսուցիչ - անձնավորության հեղինակության նկատմամբ շրջապատի կողմից առավել ուշադիր ու հարգալից վերաբերմունքի դրսևորմանը: Նշենք, որ «Տարվա լավագույն տնօրեն» է ճանաչվել Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, «Տարվա լավագույն ուսուցիչ»՝ Վ. Ջհանգիրյանի անվան հ.11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մանուշ Բալայանը: «Տարվա լավագույն գիտնական»-ը ևս հ. 11 ավագ դպրոցից է՝ Արմեն Դոլուխանյանը, իսկ «Տարվա լավագույն դաստիարակ»՝ հ. 2 մանկապարտեզի դաստիարակ Ռամելա Իսախանյանը:

Ապրիլ ամսին անց է կացվել նաև «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթը, որի քաղաքային փուլի հաղթող է ճանաչվել հ. 8 ավագ դպրոցի աշակերտուհի Անահիտ Պողոսյանը, ով կարողացել է պահպանել մրցույթի հաղթողի դափնին նաև հանրապետական փուլում:

Կազմակերպվել են օլիմպիադաներ բոլոր առարկաներից, ինչը քանակական և որակական տեսակետից գերազանցել է անցած ուսումնական տարվա ցուցանիշը: Ուստի, տարին կրթական հաստատությունների համար առանձնակի էր նրանով, որ անցկացված բոլոր ավանդական միջոցառումները՝ սկսած շարադրությունների, ասմունքի ու երգի մրցույթներից, անցել են բարձր մակարդակով:

Նշենք, որ շարադրությունների մրցույթներ են անցկացվել Ստեփանակերտի, Մայրենիի օրվան, Ցեղասպանության 100- ամյակին, Մայիսյան եռատոնին նվիրված: Բոլոր հաղթողներն էլ խրախուսվել են բաժնի կողմից:

Կազմակերպվել է նաև ասմունքի և հայրենասիրական երգերի մրցույթ-փառատոն, որին մասնակցել են 27 աշակերտներ. նրանցից 12-ը զբաղեցրել են մրցանակային տեղեր: Ինչ վերաբերում է առարկայական օլիմպիադաներին, ուրախությամբ կարելի է փաստել, որ տարբեր առարկաներից քաղաքային փուլին մասնակցել են 353 աշակերտներ, որոնցից հանրապետական փուլ են անցել 126-ը: Բոլորն էլ խրախուսվել են բաժնի կողմից՝ արժանանալով պատվոգրերի և հուշանվերների:

Հանրակրթական բոլոր հաստատություններում բարձր մակարդակով ու մեծ պատասխանատվությամբ են մոտեցել նաև Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը. յուրաքանչյուր աշակերտ և ուսուցիչ միջոցառմանը իր մասնակցությունը համարել է հոգու պարտք:

Այս տարի առանձնակի ուշադրության կենտրոնում է պահվել Մեծ հայրենականի հաղթանակի 70- ամյակի նշումը, քանզի անցել են 70 երկար ու ծիգ տարիներ, և փառապանծ վետերանների շարքերը գնալով նոսրանում են: Դպրոցներում ջանացել են հերոսների կյանքի օրինակով դաստիարակել սերունդներին:

Մայիսի 23-ը մայրաքաղաքի շուրջ 7300 դպրոցականների համար նշանավորվեց ուսումնական պարապմունքների ավարտով: Այս ուսումնական տարում իրականացվեց 6 տարեկանների առաջին թողարկումը: Դրանք այն աշակերտներն են, ովքեր 1-ին դասարան ընդունվեցին 6 տարեկանից: Թերևս դա է պատճառը, որ այս ուսումնականում ունեցանք ամենաքիչ թվով 9-րդցիներ՝ 311 հոգի, երբ նախորդ տարիներին այդ թիվը տատանվում էր 700-ի սահմաններում: Նման քիչ շրջանավարտ ունենալու փաստը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 9 տարի առաջ միաժամանակ ընդունելություն է կատարվել 2 խմբով՝ 6,5 և 6 տարեկան երեխաների, իսկ 12-րդ դասարանն ավարտել են 377 շրջանավարտներ: Այս թիվը ևս հարաբերական է, քանի որ աշակերտների մի մասը հիմնական դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է քոլեջներ:

Առաջիկայում կրթական ոլորտի պատասխանատուների համար սպասվում է առավել բարդ շրջան, քանի որ սկսված է 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտների քննաշրջանը: Հավելենք, որ քննաշրջանի ավարտից հետո համապատասխան օղակները կսկսեն զբաղվել ամառային ճամբարների կազմակերպմամբ, այնուհետև՝ նոր ուսումնականի նախապատրաստմամբ:

Լիրա ՂԱԼԱՅԱՆ

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԻՄՔԸ՝ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երջանիկ են այն մարդիկ,
ովքեր աշխատում են երեխաների հետ:

Այս անգամ հյուրերին Խնապատի նախադպրոցական հիմնարկ էր բերել մի ուրիշ առիթ: Նրանք եկել էին ունկնդրելու ավագ խմբի դաստիարակչուհի Անուշ Ասրյանի կազմակերպած բաց դասը մաթեմատիկայից:

Հենց այստեղ է, այս ջերմ միջավայրում է ձևավորվում ապագա սովորողների գիտելիքների հիմնական ու կարևոր շտեմարանը: Շտեմարան, որ, հետագայում բազում խոչընդոտներ հաղթահարելով, գիտության աստիճաններով դանդաղ, բայց վստահ քայլերով առաջընթաց է արձանագրում:

Այս օջախում տարրական գիտելիքներ ձեռք բերելով՝ երեխաները հետագայում դպրոցում ավելի ակտիվ ու համարձակ են դառնում, կարողանում են հեշտ հաղթահարել դժվարությունները:

Ուրեմն՝ շատ բան է կախված նրանից, թե ինչպես է դրվում գիտելիքների հիմքը նախադպրոցական հիմնարկում, ինչքանով են զարգանում երեխայի աշխարհընկալումն ու մտահորիզոնը, ինչպես են ձևավորվում մարդկային հարաբերությունները և՛ անհատականի, և՛ ընդհանուրի համատեքստում:

Հուրախությամբ պիտի նշել, որ հուսադրող շատ բան կար կազմակերպված բաց դասի շրջանակներում:

Թեման՝ «7 թիվը և թվանշանը, կարգային հաշվի տարրերը», շատ մեծ հնարավորություն տվեց դաստիարակին բացահայտելու երեխաների մաթեմատիկական ունակությունները: Այնքան դիտողական ու ընկալելի էին օգտագործվող եղանակները, որ երեխաներն ազատ ու անկաշկանդ արտահայտում էին իրենց կարծիքները, ցուցադրում գիտելիքները:

Մինչև հիմնական նյութին անցնելը վերհիշեցին ու ամրապնդեցին 1-6 թվերը, նրանց կազմությունները: Հմուտ դաստիարակը (8 տարվա աշխատանքային ստաժով) շատ մեծ պատասխանատվությամբ էր նախապատրաստվել դասին: Կային բոլոր անհրաժեշտ պարագաները՝ 1-7 թվանշաններն ու նրանց կազմությունները պատկերող նկարներ, 7-ական առարկաներ՝ խնձոր, թխվածք, երկրաչափական պատկերներ, մատիտներ, 7 թվով պաստառ՝ ծիածանով (7 գույն), խնձորներով, բուրգերով, ձկներով, շաբաթվա օրերով, արևով (7 շողերով):

Գիտելիքի մատուցումը տեսողական դարձնելով՝ Անուշ Ասրյանը քաղեց իր ցանած սերմի պտուղները՝ հատ-հատ, դանդաղ, բայց շատ կարևոր:

Երեխաներն արդեն կարողանում են զանազանել զույգ և կենտ թվերի գունային տարբերությունները (զույգը՝ կարմիր, կենտը՝ կապույտ), նախորդ և հաջորդ հասկացությունները, մեծի և փոքրի նշանները, միևնույնային հասկացությունները, 1-10, 10-1, 1-6, 6-1 թվերի սահմաններում հաշվումները, 7 թվի կազմությունը՝ երկու ձեռքերի մատների միջոցով:

Անգամ ֆիզկուլտդադարի ժամանակ նրանց մատիկները մերթ կորանում, բռունցք էին դառնում, աջից, ձախից հարվածում, մերթ 1-5 հաշվով քնում, գնդակ դառնում, մերթ արթնանում, խաղում ուրախանում՝ հանդես բերելով նաև խոսքի դրսևորումները:

Այնքան շոշափելի էին նրանց գիտելիքները ծիածանի 7 գույների, շաբաթվա 7 օրերի, տարվա 7-րդ ամսի, երաժշտության 7 հիմնական նոտաների, մեր շրջապատի միջավայրի (7 միրգ, 7 բանջարեղեն, 7 թռչուն, 7 կենդանի և այլն) վերաբերյալ, որ ներկաները մեծ բավականություն ստացան:

Հանձնարարվեց նաև գործնական աշխատանք. ներկել 7 մատ, տորթերի վրա նկարել 7 մոմեր:

Ամեն ինչ 7-ով էր շնչում դասին, որ տևեց ընդամենը 30 րոպե, բայց 100 բան ուսուցանվեց երեխաներին:

Ամբողջ ընթացքում լսելի էր դաստիարակի մեղմ, փաղաքուշ, համոզող, բայց ոչ սաստող ձայնը, ինչն էլ տվեց իր ցանկալի արդյունքը:

Այնուհետև կազմակերպվեց գրական-երաժշտական միջոցառում՝ նվիրված Ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Անուշ Ասրյանը հանդես եկավ համառոտ ելույթով:

Եղեռնի ցավի շեշտերով և արցախյան բառ ու բանի աշխույժ ելևէջներով միահյուսված միջոցառումն ավարտվեց 100 թվի տեսքով շարված մոմավառությամբ, որը հարգանքի յուրահատուկ տուրք էր 1,5 միլիոն զոհերի հիշատակին:

Քննարկման ժամանակ ներկաները՝ Սվետլանա Ասրյան (կրթության բաժնի ավագ մասնագետ), Այգեստանի և Ավետարանոցի մանկապարտեզների տնօրեններ, Խնձրիստանի, Հարավի և Ասկերանի մանկապարտեզների դաստիարակներ, Խնապատի մանկապարտեզի ավագ խմբի ծնողկոմիտեի նախագահ, հիացմունքի խոսքեր հնչեցրին Անուշ Ասրյանի կատարած աշխատանքի, նրա մարդկային տեսակի վերաբերյալ, առաջարկեցին հաճախակի կազմակերպել նման այցելություններ՝ փորձ ձեռք բերելու և փորձի փոխանակման նպատակով:

Ընդգծեցին ամենակարևորը. մանուկների հրաշք աշխարհում աշխատողները ամենաերջանիկ մարդիկ են, քանզի այդ անմեղ ու անապական հոգիներն են լցնում կյանքի դատարկությունը:

Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏՈՆ՝ ՔՆԱՐԱՎԱՆՈՒՄ

Օրերս կայացած հանդիսությունը Շահումյանի շրջանի Քնարավանի հիմնական դպրոցում, կարելի է ասել, տեղի ուժերով կազմակերպված առաջին միջոցառումն էր: Այս ամենի «մեղավորը» Սամվել Պողոսյանն էր, որը հաճախում է Քնարավանի դպրոցի առաջին դասարան:

Օրը տոնական էր թե՛ Սամվելիկի համար, թե՛ ուսուցիչների: Քանի որ դասարանը երկկազմ է, և դպրոցն ունի ընդամենը 22 աշակերտ, ուստի դասվար Մարիետա Միքայելյանը բոլորին ընդգրկել էր միջոցառմանը: Երեխաները մեծ ոգևորությամբ կատարում էին հայահունչ անաղարտ երգ ու ասմունք: Այն կարծես թե ամբողջ տարվա կատարած աշխատանքի ստուգատես էր, հատկապես՝ Սամվելի համար: Դասվարի տքնաջան աշխատանքը զգացվում էր երեխաների ներկայացրած բեկեկանացման մեջ, նրանց կատարած պարի ու երկխոսության ընթացքում:

Քնարավանը գտնվում է Վարդենիս -Մարտակերտ մայրուղու վրա: Այստեղ դպրոցը իր աշխատանքները սկսել է 2006 թվականին՝ ընդամենը 6 աշակերտով: Համայնքում կա 15 տնտեսություն, իսկ հաջորդ տարին, ըստ համայնքապետ Մարինե Փիլոսյանի, դպրոց կհաճախեն շուրջ 30 երեխաներ:

Մարիամ ՓԻԼԱՖՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑ - ԲԱՆԱԿ - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճարտարի հ.5 միջնակարգ դպրոցը արդեն չորս տարի է, ինչ հիմնադրման օրվանից գործում է Մարտունու Երկրորդ պաշտպանական շրջանի հարևանությամբ: Ոմանք կարող են հոգեբանական անհանգստություն ապրել. բայց ո՛չ մենք, որովհետև գտնվելով հուսալի հարևանի կողքին՝ գործում ենք ավելի վստահ: Դպրոց-բանակ-հասարակություն կապը անշեղորեն ուղեկցում է մեզ ազգային միասնության, նոր գաղափարների առաջացման և, իհարկե, այդ գաղափարները համատեղ իրականացնելու ճանապարհին: Երկրորդ ՊՇ-ն մեզ համար միշտ արժեք է, իսկ օգնողները, անշուշտ, հեղինակություն: Այդպիսի հեղինակություն է Երկրորդ ՊՇ-ի հրամանատարությունը՝ գնդապետ Գեղամ Գաբրիելյանի գլխավորությամբ: Ի դեմս նրա՝ Ճարտարի հ.5 միջնակարգ դպրոցը պարզապես հոգատար ձեռք ունի:

Մեր համատեղ աշխատանքները բավական շատ են ու բազմաբնույթ: Այն արտահայտվում է սպորտային, գիտական, գրական-գեղարվեստական, մշակութային բնագավառներում, որտեղ զինվորականները դպրոցականներին սովորեցնում են մարտական խաղեր, ազգային պարեր, երգեցողություն... Ոմանք կարող են կարծել, թե ինչ-որ հետաքրքիր ժամանց է սա, բայց՝ ո՛չ: Յուրաքանչյուր բնագավառի աշխատանք իր արդյունքն ունի, մեզ հետ աշխատող մեր զինվորի՝ Զավեն Բաղդասարյանի, Համազասպ Ասլանյանի, Սահակ Ղազարյանի, Մխիթար Սարգսյանի, Գևորգ Երեմյանի պատասխանատվության շնորհիվ: Ի միջի այլոց նշեմ, որ նրանք իրենց հոգատար վերաբերմունքով վայելում են ողջ դպրոցի կոլեկտիվի սերն ու հարգանքը և պատահական չէ, որ խոսակցության մեջ օգտագործում ենք «մեր զինվորը» արտահայտությունը:

Չմոռանանք նշել, որ Համազասպ Ասլանյանի սովորեցրած ազգային պարերով («Փափուրի», «Սասնա քոչարի», «Սղերդի քոչարի», «Յարխուշտա») մեր դպրոցը (Զավեն Բաղդասարյանի ղեկավարությամբ) մայիսի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ազգային պարերի մրցույթում, «Սասնա քոչարի» պարով, զբաղեցրել է առաջին տեղը ու Մեծ նախարարության կողմից արժանացել պատվոգրի ու հուշանվերների: Էլ չեմ խոսում այն հաճույքից, որ ստացան մեր աշակերտները մրցույթի ժամանակ: Ուղղակի պետք էր միայն տեսնել, թե պատմելիս ինչպես էին փայլում նրանց աչքերը: Ոգևորված ուսուցիչների առաջարկով՝ Զավեն Բաղդասարյանը նրանց ևս սովորեցրեց ազգային պարեր: Նրանք ոչ միայն սովորել են, այլև դպրոցի միջոցառումների ժամանակ իրենց պարերով հանդես են գալիս զինվորի ու աշակերտի հետ միևնույն բեմահարթակում: Ոգևորության մի բարձրագույն զգացում, որն ապրում ենք ոչ միայն մենք, այլև բոլոր հանդիսատեսները:

2-րդ ՊՇ-ի «Հայ ասպետ» թիմը բազմիցս է մեզ նվիրատվություններ արել: Դպրոցին նվիրել են երաժշտական կենտրոն, գլոբուս, ՀՀ-ի և ԼՂՀ-ի, «Հայկական լեռնաշխարհ» մեծամասշտաբ քարտեզները: Նրանք նաև իրենց միջոցառումներին հաճախ մասնակից են անում մեր աշակերտներին: Հադրութում կայացած ինտելեկտուալ խաղին «Հայ ասպետ» թիմի ավագ Արամ Թորոսյանը խաղին մասնակից արեց 9-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Ղուկասյանին և վերջում արտահայտեց իր գոհունակությունը:

Համատեղ աշխատանքի ընթացքում, բավական է առաջարկ, տարբերություն չկա դպրոցի, բանակի, թե տեղացիների կողմից, անմիջապես գործի մեջ է դրվում:

Կանանց միջազգային օրը ոգևորության համընդհանուր տոն էր: Պարոն հրամանատարի առաջարկությամբ կազմվեց երեք թիմ՝ աշակերտուհիներ, ուսուցչուհիներ, տեղի բնակչուհիներ՝ կին զինծառայողների հետ: Թիմերը մրցեցին վոլեյբոլի, շախմատի, շաշկու, սեղանի թենիսի (ի դեպ, վերջում այն նվեր ստացանք) խաղերում: Հետաքրքիր ժամանցի երկրպագուներով դպրոցը լեփ-լեցուն էր: Վերջում ՊՇ-ի հրամանատարությունը հաղթող թիմերին և անհատ հաղթողներին հանձնեց գավաթներ, ակտիվներին՝ հուշանվերներ, իսկ բոլոր մասնակիցներին՝ դպրոցի հետ միասին՝ ծաղիկներ: Ոգևորության մի պաթոս, որ չի թողնում լռելյայն անցնել: Սրանք ընդամենը մի քանի օրինակներ են:

Դպրոցում կազմակերպված յուրաքանչյուր միջոցառում պարտադիր հագեցնում է ստանում դպրոցականների, զինվորների, ուսուցիչների, ծնողների մասնակցությունից, որն էլ առանձին հմայք ու որակ է հաղորդում այն բարձր մակարդակով մատուցելու համար: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են. ԼՂՀ սահմանադրության օր, Գոյամարտ, Ցեղասպանության 100-ամյակին նվիրված դաս-միջոցառում, արցախյան ազատամարտիկներին նվիրված մեծարման ցերեկույթներ, Եռատոն, Վերջին զանգ..., որոնք ամեն անգամ ընթանում են նոր գաղափարների ծնունդով և ավարտվում գոհունակության խոսքերով:

Դպրոց-բանակ-հասարակություն կապը ազգային միասնության երաշխիքներից է, որն իր արտացոլումն է գտնում նոր կյանք մտնող աշակերտների մեջ, բոլորիս մեջ: Դպրոցում ավանդույթ է դարձել հարևան դպրոցների տնօրենների, պատմության ուսուցիչների, մշակույթի տան տնօրենների հրավիրելը՝ նպատակ ունենալով փոխանցել միասնության գաղափարի սերմանման այս ձևը, որն արժանացել է Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զ. Ղուլյանի, Ճարտարի քաղաքապետ Ա. Աղաբեկյանի, հ.1 և հ. 2 դպրոցների տնօրենների, Ճարտարի մշակույթի տան տնօրենի և բազմաթիվ հյուրերի հավանությանն ու գովեստի խոսքերին: Պարոն Զ. Ղուլյանը, ներկա լինելով մեր բոլոր միջոցառումներին, ոգևորման հետ մեկտեղ շնորհակալանքի խոսք է ասում այս միասնությունը ամուր պահողներին, հատկապես՝ 2-րդ ՊՇ-ի հրամանատարությանը՝ պ. Գ. Գաբրիելյանի ղեկավարությամբ՝ նշելով, որ այս համատեղությունը և՛ արիության դաս է, և՛ հայրենասիրության դաստիարակում, և՛ հոգատարություն, որ ցուցաբերում է 2-րդ ՊՇ-ն Ճարտարի հ. 5 դպրոցի նկատմամբ:

Դպրոցի տնօրինությունը խորին շնորհակալություն է հայտնում 2-րդ ՊՇ-ի հրամանատար պ. Գ. Գաբրիելյանին՝ աջակցության, օգնության և միշտ մեր կողքին լինելու համար: Թո՛ղ Աստծո աջը հովանի լինի Ձեզ, թող Ձեզ միշտ ուղեկցի հաղթանակի բերկրանքը. խաղաղություն ձեզ, մեզ, ողջ աշխարհին:

Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Ճարտարի հ. 5 միջնակարգ դպրոցի
ՄԿԱԳ փոխտնօրեն

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Ի ԾՆԵ ԼԻՆԵԼՈՎ ՈՒՍՈՒՑԻՉ

Մանկավարժի մասնագիտությունը կարծես ի վերուստ տրված շնորհ է, որը մարդ պետք է անմնացորդ ծառայեցնի իր ժողովրդին: Իր այդ պարտականությունները բարեխղճությամբ, գերազանց ու վարպետությամբ է կատարել Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի դպրոցի ուսուցչուհի Արշալույս Հյուսնունցը:

Նրա կյանքը լի էր մաքառումներով ու հաղթանակներով, դառնություններով և ուրախություններով, ձեռքբերումներով ու կորուստներով, հուսախաբություններով, ակնկալիքներով՝ կյանքի ու ապագայի հանդեպ:

Ա.Հյուսնունցը չէր պատկերացնում իր կյանքը դպրոցից դուրս ու առանց երեխաների: Նա աշխատել է նվիրումով, սիրահարված իր մասնագիտությանն ու դպրոցին: Դասերը բացատրում էր մատչելի, գրագետ՝ աշակերտներին հասու դարձնելով թեմայի բարդ ու հետաքրքիր բառերն ու տերմինները: Աշակերտների հետ վարվում էր մայրաբար և վայելում նրանց սերն ու հարգանքը:

Մարդու հուշերի մեջ մի պահ հառնում է խորունկ սիրո զգացումն այն մարդու հանդեպ, որի օգնությամբ ոտք է դնում մեծ կյանք, ստեղծագործաբար հարստացնում իր նախնիների հոգևոր արժեքները, թափանցում գիտության խորքերը, ձեռք բերում արիություն, աշխատասիրություն, կոփվում, տոգորվում ամենաջերմ զգացումով՝ հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ:

Այդպիսի մարդ ինձ համար եղել է Արշալույս Հյուսնունցը:

Տարիները գլորվում են, հիմա թոշակառու եմ, բայց հաճախ եմ հիշում Ձեզ:

Առավել ևս այն պահն ու ժամը, երբ ես պապիկիս, իսկ դու հայրիկիդ համար ճաշ էինք բերել ձմերուկի ու սեխի բոստան: Առաջին անգամ հանդիպեցինք: Դու Շուշիի մանկավարժական տեխնիկումի 4-րդ կուրսի ուսանող, իսկ ես՝ 7-րդ դասարանն ավարտած: Երբ իմացար, որ ես 7-րդ դասարանը ավարտել եմ «4» և«5» գնահատականներով, համոզեցիր պապիս, որ ինձ տանի Շուշիի տեխնիկում՝ սովորելու: Պապս անչափ ուրախացավ, համբուրեց Արշալույսի ճակատը. այնքան էր ուրախացել, որ աչքերից արցունքի կաթիլներ էին թափվում:

Երկու օրից հետո Արշալույսի հետ ճանապարհվեցինք Շուշի: Հաջողությամբ հանձնեցի ընդունելության քննությունները և դարձա առաջին կուրսի ուսանող:

Ոտք դրեցի նոր, մեծ կյանք, իմացա, որ պետք է ուսուցիչ դառնամ, կյանքս կապեմ երեխաների՝ մատաղ սերնդի հետ:

Իսկ ի՞նչ է «ուսուցիչ» բառը. ես կասեի՝ այն արթնացնում է վեհ ու հրաշալի զգացողություն, որ մարդ ունենում է իր կյանքում: Այն իր մեջ ամփոփում է մի անսահման աշխարհ, որը լույս ու ջերմություն է պարգևում շրջապատին: Ուսուցչի ջանքերով միշտ վառ է պահվում ազգային ոգին: Նա առաջիններից է, որ սովորեցնում է սիրել հայրենիքը, պայքարել, լինել արդար ու արի, տեր կանգնել մեր երկրին ու հզորացնել այն:

Արշալույս Հյուսնունցը ծնվել ու հասակ է առել Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Սեյսուլանի յոթնամյա դպրոցում, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական տեխնիկումում: Տեխնիկումը վերջացնելուց հետո ավարտել է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի տարրական կրթության ու մեթոդիկայի բաժինը:

Շուշիում սովորելու ժամանակ տեխնիկումի ուսուցիչներ Սամվել Շինականյանն ու նրա տիկինը՝ Ելիզավետա Հովհաննիսյանը (երկուսն էլ XX դարի Արցախի լավագույն մանկավարժներ)՝ տեսնելով Արշալույսի ընդունակությունները, նվիրվածությունն ու աշխատասիրությունը և համեստ լինելը, իմանալով նրա կենսագրությունը, որ հայրը առաջին կարգի հաշմանդամ է, 6 երեխաների տեր, որոշում են նրան վերցնել որպես իրենց աղջիկ և պահել իրենց տանը: Երկուսով գալիս են Կարմիրավան՝ Արշալույսի ծնողներ Իշխանի և Մարգարիտայի հետ խորհրդակցելու: Համոզում են, որ Արշալույսը չապրի հանրակացարանում, ապրի իրենց հետ, բոլոր հոգսերը հոգան իրենք: Արշալույսը նրանց ընդունում է հարազատ ծնողի պես, իսկ նրանց երկու տղաներին՝ որպես եղբայրներ:

Երբ ավարտում է տեխնիկումը, Արշալույսին դասավորում են աշխատելու Շուշիի դպրոցներից մեկում, որտեղ աշխատում է 2 տարի, հետո տեղափոխվում է Մարտակերտի շրջանի Կիչանի դպրոցը: Երեք տարի աշխատելուց հետո շրջժողկրթբաժնի հրամանով տեղափոխվում է Կարմիրավան և նշանակվում տարրական դպրոցի վարիչ:

Ես աշխատում էի արդեն ութամյա դարձած դպրոցի ուսմասվար և պատմության ուսուցիչ, իսկ Արշալույսը՝ դասվար:

Դպրոցում կազմակերպում էինք տողան, ամփոփում շաբաթվա արդյունքները, հաշվի էինք առնում աշակերտների շաբաթվա ստացած բոլոր գնահատականները, վարքը, դպրոցում կազմակերպված միջոցառումներին մասնակցելը, պահվածքը հասարակական միջավայրում: Արշալույսի դասարանը միշտ առաջին տեղն էր գրավում: Բոլորս զարմացել էինք. ավելի շատ՝ ես:

Դասերը վերջացել էին, դպրոցում աշակերտ չկար, սակայն ձայներ կայն Արշալույսի դասարանում: Մտնում եմ դասարան, բոլոր աշակերտները ներկա են, Արշալույսը գրատախտակի մոտ խնդիր է լուծում, պարզաբանում: Դասերը սովորելուց ու տնային աշխատանքները կատարելուց հետո ստուգում էր, որից հետո բաց թողնում. այդպես համարյա ամեն օր:

Հաճախակի լինում էր աշակերտների տներում, խորհուրդներ տալիս ծնողներին:

Գլխավորել է դպրոցի երգ ու երաժշտության խմբակը, հաճախակի դպրոցում ու գյուղում կազմակերպում էր համերգներ ու թատերական ներկայացումներ:

Տարիներ շարունակ դասավանդել է հայոց լեզու և գրականություն, մի քանի տարի եղել է դպրոցի տնօրեն, կուսկոմիտեի քարտուղար, գյուղի կոմունիստների քաղխմբակավար, կանանց կոմիտեի նախագահ: 50-ական թվականներին, ամառվա ամիսներին, կազմակերպել է դպրոցականներին և գյուղի երիտասարդների ուժերով հավաքելու հասկը: Օրական հավաքում էին երկու տոննայից ավելի հասկ: Կոլվարչությունը պարգևատրում է Արշալույսին և ակտիվ, ավելի շատ հասկ հավաքողներին:

Հյուսնունցը, լինելով լավ մանկավարժ, միաժամանակ եղել է լավ հարս, լավ մայր ու տատ, լավ հարևան, աչքի էր ընկնում իր հյուրասիրությամբ: Քանի որ հասարակական հիմունքներով տանում էր նաև քաղաքական պարտականություններ, հաճախակի էին գալիս հյուրեր շրջանից ու մարզից, որոնց հյուրասիրում էր պատշաճ կերպով: Շրջանային «Բարեկամություն» թերթում Սերգեյ Վարունցը և Լևոն Նանագյուլյանը գովեստի խոսքեր էին գրել նրա մարդկային վարքագծի, լավագույն մանկավարժի ու հասարակական գործչի մասին:

Հյուսնունցը ունեցել է համեստ, օրինակելի ընտանիք: Ամուսինը՝ Ալեքսանդր Պետրոսյանը, Ստեփանակերտի գյուղտեխնիկումը ավարտելուց հետո աշխատել է գյուղում՝ որպես մեխանիզատոր: Ունեցել են երեք տղա ու մեկ աղջիկ:

Հյուսնունցի մասին կարելի է ասել, որ նա ծնվել է մանկավարժ-ուսուցիչ լինելու համար: Սերն ընտրած մասնագիտության, պաշտելի աշակերտների, հայրենի հող ու ջրի, ծառ ու ծաղկի հանդեպ այնքան խորն է եղել, այնքան անհագ, որ կարողացել է իր սաներին էլ վարակել նույն սիրով ու ջերմությամբ: Կես դարից ավելի սիրով բացել է դասարանի դուռը և մտել ժպիտով ու անհուն կարոտով դիմավորել իրեն սպասող բազում հայացքների: Նրա կենդանի խոսքը, նուրբ ու արտահայտիչ ձայնը՝ վճիտ ջրի նման պարզ, օգնել են դասերը վարել հետաքրքիր ու բովանդակալից:

Երբ փակում եմ աչքերս, հուշերիս ժապավենը դանդաղ ետ է պտտվում, աչքերիս առաջ պատկերվում է Ձեր վեհ կերպարը՝ ժպտերես ու բարեհամբույր: Հիշում եմ Ձեր ամեն մի դաս՝ այնքա՜ն մատչելի, այնքա՜ն օրինակելի:

Հիշում եմ, թե ինչպես էինք անկեղծ զրուցում մեզ հետ և բարի խորհուրդներ տալիս:

Այսօր էլ, երբ անցել եք կենսաթոշակի, ես համոզված եմ, որ կարող են լինել այնպիսի պահեր, երբ Ձեզ կթվա, թե շատ բան չեք հասցրել, կամ էլ արածը շատ քիչ է:

Բայց երբ հետադարձ հայացք ձգես հետևում մնացած տարիներին, կխաղաղվի հոգիդ , կզգաս, որ անիմաստ չես անցկացրել օրերն ու տարիները և կհամոզվես, որ հպարտանալու շատ բան ունես:

Ալեքսանդր ՀԱՍՐԱԹՅԱՆ

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ՝ ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ սովորում է:

Երբ նա դադարում է սովորել, նրա մեջ մահանում է ուսուցիչը:

Կ. Դ. Ուշինսկի

Այդպիսին է Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Սիրվարդ Թամազյանը, ում բաց դասին վերջերս ներկա էինք:

Դասն անցկացվեց 4-րդ դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից՝ «Մայրցամաքներ և օվկիանոսներ» թեմայով:

«Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ» բաժինը հարուստ է հետաքրքրաշարժ տեղեկատվությամբ. այն աշակերտներին հետաքրքրել է դեռևս տարեսկզբին՝ «Մայրցամաքներ և օվկիանոսներ» թեման անցնելու ժամանակ, ինչն էլ ուսուցչուհուն հնարավորություն ընձեռեց բաժնից առանձնացնել հատկապես մայրցամաքներն ու օվկիանոսները և պահուստային ժամի հաշվին խորացնել դրանց մասին ունեցած գիտելիքները:

Փորձառու ուսուցչուհի Ս. Թամազյանի և երիտասարդ ուսուցչուհի՝ դպրոցի աշխարհագրության մասնագետ Ս. Բոյախչյանի համագործակցային աշխատանքի ընթացքում ապահովվեց ուսուցիչ(1)-ուսուցիչ(2)- աշակերտ, ուսուցիչ(1) - աշակերտ – ուսուցիչ(2), ուսուցիչ- ուսուցիչ, աշակերտ- աշակերտ փոխադարձ կապը :

Ս. Թամազյանը գործընկերներին ներկայացրեց նորարարական իր փորձը, որն ապահովեց մեթոդական պատրաստվածության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարձր արդյունավետություն:

Երիտասարդ ուսուցչուհին առաջին քայլերն արեց կրտսեր օղակում՝ ի ցույց դնելով իր մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները :

Ինտեգրված դասի ընթացքում ապահովվեցին ուսուցիչների և աշակերտների փոխադարձ շփումները, փորձի փոխանակումը: Դասն ունի ոչ ստանդարտ կառուցվածք:

Ուսուցիչները նախապես ուսումնասիրել էին տվյալ թեմայի շուրջ չափորոշչային պահանջները, գրել դասապլան, հստակեցրել նպատակներն ու խնդիրները, պարզել, թե ինչ է պահանջվում իրենցից տվյալ դասին, հատուկ ուշադրություն դարձրել դասի գաղափարական, մանկավարժա-հոգեբանական, աշխարհայացքային ուղղվածությանը, տրամաբանական հաջորդականությանը և այն չափաբաժնին, որը պետք է ընդգրկել դասի բովանդակության մեջ՝ դրանով իսկ ապահովելով անհրաժեշտ գիտելիքների յուրացումը, կարողությունների և հմտությունների զարգացումը:

Հստակ ձևակերպված են դասի ուսուցանող, զարգացնող և դաստիարակող գործառույթները: Իսկ ուսումնական առաջադրանքները դասակարգված են «պարզից բարդ» սկզբունքին համապատասխան, ինչն էլ նպաստեց նյութի լիարժեք ամրապնդմանը: Հաշվի է առնված դասանյութի կապը ինչպես թեմատիկ խմբում ընդգրկված մյուս դասանյութերի, այնպես էլ ուսումնական մյուս առարկաների հետ՝ մայրենի, մաթեմատիկա, աշխարհագրություն, պատմություն, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա :

Դասագործընթացում կիրառված հնարներն ու մեթոդները, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստեցին աշակերտների ինքնուրույն ստեղծագործական մտքի զարգացմանը, ճանաչողական գիտելիքների ընդլայնմանը: Ս. Թամազյանի աշխատաոճում հատկապես կարևորվեցին նրա ստեղծագործական մոտեցումները, աշխատանքի ինքնատիպությունը:

Ուսուցչուհու յուրաքանչյուր դաս ստեղծագործական մտքի թռիչք է: Դասի ընթացքում մենք ականատես եղանք հետաքրքիր փաստերի, անսպասելի բացահայտման, գեղեցիկ փորձի, ոչ ստանդարտ մոտեցման արդեն իսկ յուրացված նյութի նկատմամբ: Վերարտադրողական բնույթի աշխատանքները հասցվել էին նվազագույնի, իսկ ստեղծագործական բնույթինը՝ առավելագույնի:

Ուշադրության արժանացավ նաև ուսուցչի մանկավարժական տակտը: Նա դասարանը կառավարում էր բարձր կուլտուրայով, մանկավարժական տակտով, իր անձնական օրինակով ուղղորդում էր սովորողներին: Իսկ երիտասարդ ուսուցչուհի Ս. Բոյախչյանի մոտ առկա են համապատասխան անձնային որակներ՝ նպատակասլացություն, աշխատասիրություն, ինքնուրույնություն:

Ճիշտ և նպատակային էին ընտրված նաև դիդակտիկ նյութերը, զննական պարագաները:

Ապահովված էր դասի «Գրավիչ մուտքը»: Ա. Վիվալդիի «Տարվա եղանակներ» ջութակի կոնցերտից «Գարուն» սոնետի հնչյունների ներքո պայծառ երկնքում ծագեց արևը, իսկ արև-աղջիկը շրջեց դասարանում և իր շողերով ջերմացրեց ողջ աշխարհը: Երիտասարդ ուսուցչուհի Ս. Բոյախչյանը կապ ստեղծեց արևի և դասի միջև՝ նշելով, որ այսօրվա դասն էլ է արեգակ, որի շուրջը ինչպես մոլորակներ, կպտտվեն ուսումնական մի քանի առարկաներ: Իսկ Ս. Թամազյանը սովորողների ուշադրությունը կենտրոնացրեց Երկիր մոլորակի քարտեզագրական մոդելին՝ գլոբուսի առջև նստած մտքերի մեջ խորասուզված Մարդուն: Սովորողները գիտեին, որ դա 19-րդ դարի ֆրանսիացի հայտնի քանդակագործ Ռոդենի կերտած արձանն է՝ «Մտածողը»: Այն խորհրդանշում է մարդ արարածի մտածելու, խորհելու, աշխարհում ընթացող երևույթները հասկանալու, ճանաչելու անկոտրում ձգտումը: Բոյախչյանի այն հարցին, թե ինչ է մտածում մտքերի մեջ խորասուզված մարդը, աշակերտների կողմից հնչեցին յուրովի, հետաքրքիր պատասխաններ, և փորձեցին աշխարհը ուսումնասիրել և տեսնել իրենց աչքերով:

Հանելուկով հանդես եկավ «Երկրագունդ» աշակերտը և խոսեց անվան առաջացման ու կազմության մասին: Ստեղծվեց ազատ և անկաշկանդ մթնոլորտ, և սովորողները հնարավորություն ստացան արտահայտելու իրենց կարծիքները, մտքերը փոխանակելու, բանավիճելու: Դասի փուլերը տրամաբանորեն շաղկապված էին, դասաժամը՝ հագեցած: Սահուն անցում կատարվեց հաջորդ փուլին: Իմաստավորման փուլում սովորողների ձեռք բերած գիտելիքները հանրագումարի բերելու նպատակով կիրառվեցին «Պոպ -կորն», «Խառնված հերթականություն» հնար-վարժանքը, զրույցի, հարց ու պատասխանի մեթոդները; Աշակերտները գիտեին, թե երկրագնդի քանի տոկոսն է ջուր, քանիսը՝ ցամաք: Նշեցին նաև, որ մարտի 22-ը ընդունված է Ջրի միջազգային, իսկ հունիսի 8-ը Օվկիանոսների համաշխարհային օր: Աշակերտները կարևորեցին ջրի, ընդհանրապես բնական պաշարների խնայողության անհրաժեշտությունը և համոզվեցին, որ բնական պաշարները անսպառ չեն, ուստի պետք է դրանք խնայողաբար օգտագործել:

Գիտեին, որ օվկիանոսները չորսն են՝ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական և Հյուսիսային սառուցյալ: Խոսեցին ամենամեծ և ամենախոր՝ Խաղաղ, ամենափոքր և ամենածանծաղ՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների, գունավոր՝ Կարմիր, Դեղին, Սև և Սպիտակ ծովերի մասին: Քարտեզի վրա տիկին Բոյախչյանի օգնությամբ աշակերտները ցույց տվեցին Սև, Միջերկրական, Բալթիկ և Ազովի ծովերը, որոնց մի մասը խորը մխրճված են ցամաքի մեջ: Հետաքրքիր է աշակերտների ներկայացրած այն փաստը, որ երկրագնդի վրա կա մի զարմանահրաշ ծով, որն ափեր չունի: Դա Սարգասյան ծովն է, որը գտնվում է Ատլանտյան օվկիանոսում: Նրա մակերևույթը ծածկված է սարգասներ կոչվող ջրիմուռներով, որոնցից էլ ծովն ստացել է իր անվանումը:

Ցուցադրվեց ծովը պատկերող տեսաֆիլմ և կատարվեց քարտային աշխատանք՝ զույգերով: Տիկին Թամազյանը ներկայացրեց, որ հետաքրքիր զուգադիպությամբ օվկիանոսներից յուրաքանչյուրն ունի մեկական «գունավոր»ծով: Հանձնարարվեց գծով միացնել (առաջին շարքի աշակերտները) կամ խառնված հերթականությամբ քարտերը ճիշտ դասավորել (մյուս շարքի աշակերտները).

Ատլանտյան օվկիանոս- Կարմիր ծով

Հնդկական օվկիանոս -Դեղին ծով

Խաղաղ օվկիանոս- Սև ծով

Հյուսիսային սառուցյալ օվկիանոս- Սպիտակ ծով

Ճիշտ պատասխանող զույգերը խրախուսվեցին:

Աշակերտները ըստ իրենց նախասիրության բնութագրեցին «գունավոր» ծովերը և անցան մայրցամաքներին: Օգտվելով քարտեզից՝ աշակերտները ներկայացրին վեց մայրցամաքները՝ Եվրասիա, Աֆրիկա, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Անտարկտիդա և Ավստրալիա: Գիտեին, որ ամենամեծ մայրցամաքը Եվրասիան է, և որ մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է այդ մայրցամաքում:

Նրանք պատմեցին, որ Փյունիկիա հնագույն պետության մասին ունեցած գիտելիքներն իրենց օգնել են բացատրել Եվրասիա բառի առաջացումը: Գիտնականները կարծում են, որ փյունիկերեն «Ասու» և «էրեբ» անուններն են, որ հին հունարենում դարձան «Ասիա» ու «Եվրոպա» և նրանցից էլ անցան մյուս ժողովուրդներին: Հետաքրքիր է նաև Աֆրիկա մայրցամաքը, որի կենտրոնական հատվածը չուսումնասիրելու պատճառով անվանում էին «մութ» մայրցամաք: Խոսեցին նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկաների բաժանման հատվածի՝ Պանամայի նեղուցի, իսկ հետագայում կառուցված ջրանցքի մասին՝ որպես ծովային ճանապարհ: Դասը արդիականացվեց՝ կապելով համակարգիչների արտադրության հետ, որի ամենամեծ կենտրոնը գտնվում է Հյուսիսային Ամերիկայի Սիլիկոնի հովտում: Նշվեց նաև, որ տեղեկատվական տեխնոլոգիաներից պետք է օգտվել չափավոր: Դասը կարևորվեց նաև նրանով, որ հանդես եկավ պատմական կերպար՝ Ք. Կոլումբոսը, ով հայտնագործել է Ամերիկան: Աշակերտները ներկայացրին, ըստ Կամսար Ավետիսյանի թևավոր խոսքերի, աշխարհում «Կոլումբոսը և ձուն» դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող փոքրիկ պատմությունը: Շեշտը դրվեց դիմացինի և ընդհանրապես ուրիշների աշխատանքը հարգելու գաղափարի վրա: Լսվեցին իմաստուն մտքեր բարի, ազնիվ, աշխարհը գեղեցկացնող աշխատանքի մասին:

Անցան մյուս մայրցամաքների«հետազոտմանը»:

Անտարկտիդան աշակերտների մոտ տպավորվել է հատկապես նրա զարմանալի բնակիչների՝ պինգվինների միջոցով: Վերհիշեցին պինգվինների մասին դիտած մուլտֆիլմը, նշեցին, որ պինգվինները բնակվում են մեծ խմբերով՝ գաղութներով, և որ նրանք էլ ունեն «մանկապարտեզ», ուր թողնում են իրենց ձագուկներին, քանի դեռ հայրիկն ու մայրիկը «աշխատանքի» են գնում՝ կեր հայթայթելու:

Հաջորդ մայրցամաքին անցան հարցադրման միջոցով.

Ո՞ր մայրցամաքն են հաճախ անվանում «Ագեվազների՝ կենգուրուների» երկիր, և ո՞ր կիսագնդում է գտնվում:

Աշակերտներից յուրաքանչյուրը ցանկացավ ինքը պատասխանել հարցին, քանի որ իրենք ակտիվորեն մասնակցել են «Կենգուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթին, և իրենց համար դժվար չէ կռահել, որ դա Ավստրալիա մայրցամաքն է, որի խորհրդանիշ համարվող կենդանին կենգուրուն է, իսկ մայրցամաքը գտնվում է հարավային կիսագնդում:

Կատարվեց ֆիզդադար: Կիրառվեցին աշխուժացնող վարժություններ, որոնք ավելի հետաքրքիր դարձրին դասը: Այսպես.

1. ***Երկրագունդ*** բառով կատարել «բառքամոցի»:

2. ***Ջան, կուժ, վերք*** բառերի բոլոր տառերն օգտագործելով՝ կազմել երկու նոր բառ, որոնք կապ ունենան գետի հետ :

Արագ կողմնորոշվելով՝ աշակերտները կարողացան ճիշտ կատարել առաջադրանքը: Ստեղծվեց առողջ մրցակցային ոգի: Աշխատանքը նպաստեց սովորողների բառապաշարի հարստացմանը, տրամաբանական մտածողության զարգացմանը:

Կատարվեց նաև բառաբացատրական աշխատանք՝ նորածանոթ բառերի շուրջ.

Գոգ- փոս ընկած տեղ

Մխրճվել – խրվել

Տիղմ- ցեխ

Ջրիմուռ - ջրային բույս

Ծանծաղ- ոչ խորը

Ուսուցչուհին հարց ու պատասխանի միջոցով մեկ անգամ ևս ստուգեց աշակերտների գիտելիքները.

Ո՞ր օվկիանոսն է ողողում `

ա) 5 մայրցամաքի ափերը

բ) 4 մայրցամաքի ափերը

գ) 3 մայրցամաքի ափերը

դ) 2 մայրցամաքի ափերը

Աշակերտները բարձրացնում էին համապատասխան օվկիանոսը խորհրդանշող քարտը, և ուսուցչուհին այդպես ստուգում էր դասարանի բոլոր աշակերտներին:

Տպավորիչ էին և հետաքրքիր աշակերտների ձեռքի աշխատանքները, որոնց հանձնարարականն ստացել էին նախապես: Աստղիկը բրնձի հատիկները գունավորելով, իսկ Մանյան և Գոհարիկը գունավոր թելերով պատրաստել էին անմոռուկ ծաղիկ: Աշխատանքները գեղեցիկ էին, ճաշակով, և նրանցից յուրաքանչյուրը յուրովի է պատկերել Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցը խորհրդանշող ծաղիկը: Բացատրեցին «Անմոռուկի» խորհուրդը. ծաղկաթերթիկները խորհրդանշում են 5 մայրցամաքները, ուր սփռված է ողջ հայությունը, սև գույնը՝ Եղեռնի սարսափն ու Ցեղասպանության մասին հիշողությունը, մանուշակագույնը՝ Ցեղասպանության դատապարտմանն ու ճանաչմանը մասնակից լինելը՝ «Հիշում եմ և պահանջում», դեղինը՝ հայ ժողովրդի ապրելու և արարելու հույսը: Այդ մասին է վկայում նաև վերջերս Բերձորի «Սուրբ Համբարձման» եկեղեցու հարևանությամբ բացված Եղեռնի անմահ զոհերի հիշատակին նվիրված եղևնիների պուրակը:

Դասանյութի կապը ֆիզկուլտուրա առարկայի հետ ևս հետաքրքիր էր:

Նշեցին, որ օլիմպիական օղակների գույներից յուրաքանչյուրն էլ խորհրդանշում է մեկ աշխարհամաս, այսպես՝

Եվրոպա- կապույտ

Ասիա-դեղին

Ամերիկա-կարմիր

Աֆրիկա-սև

Ավստրալիա-կանաչ

Խոսեցին օլիմպիական խաղերի մասին, նաև գիտեին, որ դեռևս Ք.ա. 776թ.Հին Հունաստանում կազմակերպվեցին աշխարհում առաջին օլիմպիական խաղերը, որին մասնակցել և մրցանակներ են շահել հայոց Տրդատ Մեծ և Վարազդատ թագավորները: Նշեցին նաև նորօրյա օլիմպիական չեմպիոններին: Ուսուցչուհին ավելացրեց, որ նրանցից յուրաքանչյուրին բնությունը շնորհ և ուժ է պարգևել, քանզի՝

Բնության ուժն անսահման է:

Պահպանել բնությունը, նշանակում է պաշտպանել հայրենիքը:

Տպավորիչ էր այն, որ աշակերտը վստահ ասաց.«Մարդը պետք է ոտքերով արմատ գցի իր հայրենի հողում, բայց նրա աչքերը թող զննեն ամբողջ աշխարհը»: Նշվեց, որ իրենց աչքերն էլ են զննում ամբողջ աշխարհը, բայց քարտեզի միջոցով: Հանդես է գալիս «քարտեզ» աշակերտը, իսկ ընկերները մեկը մյուսին լրացնելով նշում էին, որ վաղ ժամանակներում, երբ մարդիկ ոչ գիր ունեին, ոչ տպագրելու հնարավորություն, փայտիկներով նկարում էին ավազի վրա, իսկ ավելի ուշ՝ ծառի կեղևի կտորների կամ կավե սալիկների վրա: Իսկ հետագայում քարտեզներ գծել են մագաղաթների վրա, որոնք պատրաստում էին հորթի կաշվից: Կապ ստեղծվեց մագաղաթյա գրքի՝ «Մշո ճառընտիրի» հետ: Իսկ երբ մարդիկ ստեղծեցին թղթի գյուտը, սկսեցին քարտեզներ նկարել թղթի վրա:

Աշակերտները իրենց պատրաստած կենդանական և բուսական աշխարհը խորհրդանշող նկարներ- մայրցամաքներով կազմեցին աշխարհի քարտեզը:

Իսկ հետո նրանք համակարգիչներում բացեցին աշխարհի քարտեզը և իրենց հետաքրքրող մայրցամաքը, օվկիանոսը ներկեցին համապատասխան գույնով:

Տիկին Թամազյանը հիշեցրեց, որ պատին փակցված գունազարդ պաստառին անհամբեր սպասում է դեպի Երկիր մոլորակ թռչող «հրթիռը»: Աշակերտները իրենց ցանկություններն ու բարեմաղթանքները՝ խաղաղություն, սեր, բարություն, ընկերասիրություն, հատուցում և այլն, գրեցին քարտերին և տեղադրեցին պաստառի համապատասխան կտրվածքի վրա: Բառերը պատրաստվեցին «թռիչքի»: Հրթիռը կատարեց իր բարի «թռիչքը»: Պայթեց հսկա փուչիկը, և ողջ աշխարհը ողողվեց գունավոր փայլերով: Հնչեց երեխաների ուրախ երգը, որով ցանկացան, որ Երկիր մոլորակը այսպես ուրախ ու խաղաղ արեգակի ուղեկցությամբ անվերջ պտտվի և դառնա ծով երջանկության մոլորակ:

Դասի ընթացքում աշակերտները խրախուսվեցին և գնահատվեցին: աշակերտները: Գնահատականները հիմնավորվեցին:

Տրվեց տնային հանձնարարություն.

. ի՞նչ նոր բան իմացաք,

. ի՞նչը ձեզ զարմացրեց,

. ձեր բացահայտած մայրցամաքներից ո՞րն ավելի հետաքրքիր թվաց,

. ի՞նչը կուզենայիք տեսնել, ինչի՞ մասին կուզենայիք ավելի շատ բան իմանալ,

.եթե կմնան «բաց» հարցեր, կնշեք, հաջորդ դասին՝ անդրադառնալու համար:

Դասն անցավ փոխադարձ ջերմ մթնոլորտում, ուսուցիչները հասան իրենց նպատակին, քանի որ այն անցել էր նրանց մտքով ու սրտով:

Դասն ուսանելի էր և ընդօրինակման արժանի:

Վերջում աշակերտներին իրենց ջերմ խոսքն ասացին դպրոցի տնօրեն Ա. Քոսակյանը և կրթության բաժնի տեսուչ Ժ. Ավագյանը:

Սվետա ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Բերձորի հ. 1 միջնակարգ դպրոցի մեթոդմիավորման նախագահ, դասալսման մասնակիցներ

ՀԻՇՈՒՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

100-ԱՄՅԱ ՉՍՊԻԱՑՈՂ ՎԵՐՔ

Հայոց ցեղասպանությունը հայ ժողովրդի չսպիացող վերքն է, որ ամեն մի նոր սերունդ զգում է իր մեջ՝ վերապրելով ազգի մշտարթուն մորմոքն ու ցավը: Բայց այն նաև ապագային միտված ուղերձներ ունի. Ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ դպրոցականներին առաջարկված շարադրությունների մեջ կա վիշտը հաղթանակներով ամոքելու, անցյալը հիշելով՝ ապագան արժանապատվորեն կառուցելու հստակ գիտակցում: Իսկ դրա համար հայը պետք է ապրի իր հայրենիքում, շենացնի երկիրը և անշուշտ, անառիկ պահի իր երկրի սահմանները:



Այդ լավատեսությամբ ապրող ազգը կարող է շարունակել գոյատևել գալիք դարերում:

Ստորև ներկայացնում ենք երեք շարադրություն և շարունակաբար կտպագրենք 18-20 միավորներ գնահատված ստեղծագործությունները: Նշենք, որ նրանց հեղինակները արժանացել են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության շնորհակալագրերին:

* * *

Արևը փակեց իր աչքերը հոգնած և տեղը զիջեց դալկադեմ լուսնին: Ամպերի տակից դուրս լողաց լուսինն ու իր գունատ լույսը սփռեց չորս դին: Գիշերվա չարագույժ մութի թագավորությունը չէր խախտում անգամ քամին:

Նայում է լուսինը վերևից ու աչքը չի թարթում. ապշել, քարացել է աչքը լուսնի էլ…չի փակվում արդեն հարյուր տարի: Նայում է լուսինն իր չփակվող մի հատիկ աչքով ու ոչինչ չի տեսնում: Հարյուր տարի է՝ լուսինը նայում ու ոչինչ չի տեսնում. հարյուր տարի է՝ նայում են իրար ու լուռ են մնում. բառեր չեն գտնում, բառերն անզոր են: Սաստիկ ցավից կարող ես ոռնալ, անտանելի ցավից սկսվում, պապանձվում ես:

Սկսված, պապանձված են լուսինն ու անապատը արդեն հարյուր տարի: Թվում է՝ նրանց հոգեցունց դաշինքը, որ կնքվել է ակամա, չի խախտի ոչինչ ու ոչ ոք:

Բայց հանկարծ լուսնի անթարթ աչքից մի հատիկ արցունք կաթեց անապատի ավազի վրա: Հարյուր տարվա տառապանքից ծնված կաթիլն այդ հրաշք գործեց. ավազների միջից հառնեց մի ուրվական…մարդկային կերպարանք հիշեցնող այդ ուրվականը տարակուսած էր. գլխում մղձավանջ է, աչքերի առաջ՝ արյուն, արցունք, շուրջը՝ ամայություն: Նա երևի տասնհինգ տարեկան կլիներ (կամ գուցե…հարյուր տասնհինգ), բայց, ո՜վ զարմանք, սպիտակ էին մազերը, հայացքը՝ խորշոմապատ:

Դեմքի անորոշ արտահայտությամբ նայեց շուրջը, կարծես ինչ-որ բան էր փնտրում: Ահա գտավ. սրինգ էր, կամ գոնե ինքն այդպես կարծեց: Վերցրեց, դրեց շուրթերին, փորձեց նվագել: Սրինգ-ոսկորը ձայն հանեց, ձայն, որ նման չէր երգի, ոչ էլ՝ այլ ձայնի:

Այդ ձայնը թույլ էր, բայց տարածվեց անապատով մեկ, անցավ ավազների միջով, խառնեց իրար անցյալ ու ներկա:

Քայլում է ուրվականը՝ սրինգ-ոսկորը նվագելով, և նվագի ամեն մի հնչյունի հետ մի նոր ուրվական է հառնում ավազներից, մեկը դառնում է տասը, հարյուր, հազար, միլիոն…միլիոն ու կես: Մեկուկես միլիոն ուրվական, մեկուկես միլիոն խեղված ճակատագիր, մեկուկես միլիոն անպատասխան մնացած հարց:

Հարյուր տարի է անցել. մեր վերքը չի սպիացել: Ու այդ չսպիացած վերքից վեր հառնեցին մեկուկես միլիոն ուրվականներ, որոնք մարմին կդառնան և կշարունակեն իրենց՝ հարյուր տարով ընդհատված կյանքը:

Մեր վերքը չի սպիացել ու չի սպիանա երբեք. սպիանալու համար պետք է արյուն մակարդվի, բայց ինչպե՞ս կարող է մեկուկես միլիոնի արյունը մակարդվել, թեկուզ անցնի հարյուր, հազար տարի:

Մեր վերքը չի սպիացել ու չի սպիանա երբեք, քանզի ընդմիշտ կլսվի մեկուկես միլիոն զոհերի հառաչը, նրանց պահանջ-բողոքը՝ ուղղված ամբողջ աշխարհին:

Չի սպիացել մեր վերքը, ու այդ չսպիացած վերքը «վրեժ» է գոռում: Միլիոնավոր հայերի երկնառաք հայացքներն ու ձեռքերը արդարություն են պահանջում, և այդ պահանջը կհնչի այնքան ժամանակ, մինչև սֆինքսված աշխարհը լսի մեզ:

Անհագ վրեժով լցված հայի սիրտը հարյուր տարի է՝ չի տրաքում, չի մեռնում հայը, քանզի անավարտ գործ ունի՝ վրեժ՛:

Հայի ուզածը միայն արդարություն է…արդարությու՞ն, երբեմն էլ այս բառն արտասանելիս հայի դեմքին քմծիծաղ ես տեսնում. դա, թերևս, բնական է, քանի որ հայն արհամարհանքով ու քմծիծաղով էլ պետք է վերաբերվեր այն բանին, ինչին կարոտ է մնացել, ինչն իր համար ամենաօտարն է աշխարհիս տակ, ինչին այդպես էլ չհանդիպեց 100 տարի շարունակ:

-Ասա՛ ինձ, ո՛վ մարդկություն, ո՛վ աշխարհ, մի՞թե մի գեղեցիկ օր հայը վերջապես կիմանա՝ ինչ է «արդարություն» ասվածը, մի՞թե մեծն Աստված մի օր կխղճա տառապած այս թշվառ ազգին, մի՞թե ոճրագործի չար շուրթերը մի օր կշշնջան. «Մենք ենք, այո՛, եղեռնի չար հեղինակները»: Մի՞թե թուրքը մի օր կխոստովանի, որ, այո՛, եղել է այդ ոճրագործությունը, եղել է ցեղասպանություն: Ու վերջապես, աշխարհը հային կնայի որպես մի տառապած, բայց պայքարող. մարտնչող, փյունիկի պես մոխիրներից վեր բարձրացող ազգի:

Մանե ՍԱՐԳՍՅԱՆ
Ստեփ. հ. 11 ավագ դպրոցի 10-րդ հ-1 դաս.

* * *

Ասում են՝ ժամանակը բուժում է վերքերը և մոռանալ տալիս վիշտը: Սակայն ցավեր կան, որ երբեք չեն ամոքվում, և վերքեր կան, որ երբեք չեն սպիանում, արնածոր են և կսկծալի, ինչքան էլ որ հոսի ժամանակը…

Հիմա, երբ ես արդեն բավական մեծ եմ՝ գնահատելու և տարբերելու համար ճշմարտությունն ու կեղծիքը, երբ հստակ են պատկերացումներս, երբ ծանոթ եմ հայրենիքիս պատմությանը, և գիտելիքներս ու աշխարհճանաչողությունս լույս են սփռում իմ նպատակների ու իղձերի վրա, հասկանում եմ՝ ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է, և արդարացի եմ համարում, որ աշխարհի բազմալեզու ու բազմավանդ ժողովուրդների մեջ հայն էլ իր երկիրը ծաղկեցնի, և հայկական կոչվի այն ամենը, ինչն իսկապես հայկական էր ի սկզբանե:

Մի ամբողջ դար է անցել այն օրից, երբ…

Աշխարհում պատերազմ էր: Եվ պատերազմի թոհուբոհի մեջ չլսվե՞ց, արդյոք, սարսափի և օգնության ճիչը, թե՞ չլսելուն տրվեց:

Պատերազմ էր, և թուրքը գազանին հատուկ բնազդով զգաց, որ պահը հարմար է, զոհը՝ անպաշտպան: Հայտարարեց.

-Հայաստան չկա՞: Հայկական հարց չկա՞. ես եմ այս երկրի տերը…

Ամենադաժանն այն էր, որ «օրինական» էր այդ ամենը:

-Ես եմ օրենքը, ինչպես կուզենամ, կտնօրինեմ:

…Ու ձգվեցին մահվան քարավանները փոշոտ ճանապարհներով, սով ու զրկանքով, ավարներո՜վ, ավերներո՜վ, օր ու գիշեր շարունակ:

Այնտեղ, ուր հայ շինականի հորովելն էր թևածում, ուր աղոթքը դարձել էր Նարեկ, ու առասպելը՝ պատմություն, ոռնում էին անտեր շների ոհմակները: Այնտեղ, ուր կրթվել էր հազար սերունդ, ուր կերտվել էր եկեղեցի ու խաչքար, մոխիրն ու ծուխն էին թագավորում: Այնտեղ, ուր կռվել էին Արաբո և Սերոբ, Անդրանիկ ու Գևորգ, արյան գետեր էին հոսում:

…Հորս պապը՝ իմ մեծ պապ Հարութը, Բիթլիսից էր: Ապրեց ու մեռավ Զրաբերդում: Ապրեց հարազատների՝ մի ողջ գերդաստանի կորստի կսկիծը սրտում, ապրեց, զավակներ ունեցավ, նրանց կոչեց իր սիրելիների անուններով և ասաց, որ նրանք երկու կյանք են ապրում. ապրում են նաև «արմատից պոկված ծաղիկների» փոխարեն:

«Արմատից պոկված ծաղիկներ». այդպես էր նա կոչում իր քույր ու եղբայրներին, որոնք եղեռնազարկ կորան անէության ծովի անհատակ անդունդներում:

Հարութ պապս ուժ գտավ իր մեջ՝ հաստատելու խոշտանգված գերդաստանի հարատևությունը. տուն կառուցեց, որդիներ ունեցավ, վերընձյուղվեց արցախյան հողում, սակայն երբեք չմոռացավ իր բարբառը, հայրենի գյուղում անցկացրած երազային օրերը: Երբեմն պատմում էր իր լուսավոր մանկության քաղցր հիշողություններից, երբ ինքը մի շեն օջախի սիրված երեխան էր, վազում էր կալից դաշտ, դաշտից՝ այգի և հասցնում էր օգնել հորը, հորեղբորը, պապին…, ապա նորից սևակնած սրտով հիշում էր ջարդը, ողջ ընտանիքի կոտորվելը, հոր ու մոր սպանվելը…Թե ինչու իրեն կենդանի թողեցին, մինչև վերջ չհասկացավ. երևի փոքրիկի համար ապրելն ու տանջվելը ավելի մեծ պատիժ համարեցին: Բարբարոսնե՛ր:

Իմ երակներում հոսում է պապերիս ազնվազարմ արյունը, և իմ պարտքն է ի կատար ածել նախնիներիս սրբազան ուխտը: «Արմատից պոկված ծաղիկների» խորշակահար ու բեկված ճակատագրերը ստիպում են ինձ տարածել արմատներս, հզորանալ ու պատրաստ լինել դիմագրավելու աշխարհի ամենավերջին փոթորիկներին անգամ:

Պատմության ընթացքը պարուրաձև է, և Արցախի համար մղվող պայքարը վաղեմի կռվի շարունակությունն է, որը հաղթականորեն պիտի վերջանա Սասնա լեռներում, ուրեմն՝ Արցախով է անցնում Մարութա սարի ճանապարհը:

…Հարություն պապիս ճակատագիրը մի ամբողջ ժողովրդի ողբալի պատմությունն է: Ժողովուրդ, որին վիճակվեց կրել մարդկության հիշողության մեջ եղած բոլոր աղետներից ծանրագույնը, վիճակվեց մորթվել, հոշոտվել, խոշտանգվել…և այն էլ իր դարավոր հայրենիքում: Ժողովուրդ, որն անցավ իր իսկ պաշտած Աստծո տանջանքի և փորձության ճանապարհը, անցավ Գողգոթան, անարգվեց, խաչվեց և ապա՝ հարություն առավ ու ապրեց: Ապրեց՝ ի հեճուկս խուլ աշխարհի, ի հեճուկս անարգ թշնամու…

Եվ ո՞վ է Թալեաթը՝ ընդդեմ հավերժության…

Արարատի դիմաց՝ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա, վեր է խոյանում երկնասլաց կոթողը, իսկ նրա կողքին՝ խոնարհված քարերի մեջ, վառվում է հավերժական կրակը՝ ի հիշատակ եղեռնի զոհերի: Թվում է՝ ուր որ է պիտի միաձուլվեն ահռելի քարերը, և երկինք պիտի մխրճվի երկրորդ սյունը՝ ավելի ամրակուռ և հզոր՝ որպես վերածնված Արևմտյան Հայաստան:

Եվ քանի կա Արարատը՝ որպես հույս ու ապավեն, իր վրա հառած պիտի ունենա աշխարհի բոլոր հայերի հայրենակարոտ աչքերը:

Եվ քանի կա Արարատը՝ ինքը պանդուխտ, բայց պանդուխտին տուն կանչող, պիտի հայտարարենք ի լուր աշխարհի՝ հիշում ենք ու պահանջում:

Գեւորգ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
Ստեփ հ. 11 ավագ դպրոց, 12-րդ բն.

* * *

Մանկության չքնաղ մի երազ միշտ ուղեկցում է ինձ. կանգնել եմ Քիրսի բարձր գագաթին և թևերս բացած՝ սլանում եմ: Սավառնում եմ արծվի պես՝ իմ հայացքի տակ առնելով չքնաղ լեռնաշխարհս: Երկնքում, ուր չկան սահմաններ ու ազգային թշնամանք, ես մեկ-մեկ հաշվում եմ հայրենիքիս կորուսյալ նահանգները և միասնության շուրջպար ծավալում Քիրսի, Մռովի և Մասիսի շուրջը:

Ասում են՝ որտեղ վերջանում է չքնաղ երազը, այնտեղից էլ սկսվում է դառը իրականությունը:

Մանուշակվեց ապրիլյան առավոտը, և ցող կաթեց անմոռուկների թերթիկներին: Այդ ցողը դարձավ իմ ազգի հավաքական հիշողությունը և պարտադրեց.

-Հիշի՛ր և պահանջի՛ր:

-Կհիշեմ և կպահանջեմ:

Բռնում եմ աղոթքի ճանապարհը և մտնում սրբատուն:

-Օրհնյա՜լ լինես, Տե՛ր, որ մեզ՝ հայերիս, այս սուրբ դրախտավայրն ես տվել: Վա՛ր իջիր, Հիսու՛ս, երկնային քո թագավորությունից և իմ երկրում ապաստանի՛ր:

-Չէ՛, որդյա՛կս, սև ու սպիտակ է ձեր երկիրը: Իմ ոտները արյունոտվել են Անիում ու Կարսում, Մուշում ու Սասունում, իմ սրտում կարկուտ է ու ձյուն:

-Իսկ ե՞րբ կգաս, Հիսու՛ս, քո սքեմից դեռ արյուն է կաթում:

-Կգամ, որդի՛ս, երբ դուք ալիք-ալիք, վտակ-վտակ կհավաքվեք և ձեր պահանջին տեր կկանգնեք: Խոստանո՞ւմ ես:

-Խոստանում եմ:

Իմ հոգում ապաստանած աղավնիները հանկարծ արծիվներ դարձան, առան ինձ իրենց թևերին և տարան այնտեղ, ուր խաչված-խաչքարված Հայաստանն է:

…Այրված կամար, վեմ տապալված, վայրի եղինջներով բուրող Անի: Լեռը ճեղքված է, իսկ բարձունքում հրաշքով կենդանի է մնացել մի պատ…Մոտեցա, շոշափեցի:

-Քո փլված կամարներին ես խոյակ ու սյուն կդառնամ, վե՛ր կաց, հարազատս, տանեմ քեզ հայրենիք:

-Կամա՜ց, որդյա՜կս. իմ ներսում օրոցք եմ ճոճում, թող քնի փոքրիկ մանչուկն իմ, մի՛ խանգարիր նրա քունը, մի՛ դիպչիր, կփլվի սյունը, և իմ բալիկը չի տեսնի ազատությունը:

Շոշափեցի հրաշքով կենդանի մնացած սրբապատկերի մամուռները: Արցունք կաթեց և լուսավորեց մանուկ Հիսուսին կերակրող Աստվածամոր դեմքը:

-Սու՛րբ Աստվածամայր, այս գորշության ու ցրտի մե՞ջ ես կերակրում փոքրիկ Հիսուսին:

-Որդյա՛կ իմ, ես հայ մանչուկին եմ կերակրում, որ չհասցրեց կշտանալ մոր կաթից:

Հրա՜շք, հիմա եմ հասկանում, թե ինչու Հիսուսը հայի աչքերն ունի ու քայլվածքը:

Իրիկնային մուժում կորավ քարեղեն մի հրաշալիք, քարի արցունք, մամուռի լաց…

-Սպասի՛ր ինձ, Անի՛, ես ավերված քո եկեղեցու կանթեղին յուղի տեղ արյունս կտամ, կկամարվեմ սրբատանդ, քո գմբեթին թառած լուսինը կշպրտեմ և խաչի հետ մեկտեղ եռագույնս կդնեմ…

Դեր-Զորը վառվում է ու կայծկլտում, հառաչում են ուրվականները, բռունցքվում, դառնում երկինք կարկառած ձեռքեր. «Տա՛ր մեզ հայրենիք, թող մենք հանգչենք մե՛ր հողում»:

Կարոտի ու սպասումի շուրջպար բռնեցին կորուսյալ իմ քաղաքները՝ Կարին, Մուշ ու Սասուն, Ադանա ու Կարս:

-Տա՛ր մեզ հայրենիք:

-Կտանեմ ու ընդմիշտ կսրբեմ արցունքներս: Աշխարհն անտարբեր է ցավի ու տառապանքի նկատմամբ: Ես հիմա պահանջատեր եմ և դեռ հաշիվներ ունեմ պատմության հետ: Պատմության պարտամուրհակը վաղուց վերադարձնելու ժամանակն է արդեն:

Մենք երբեք չենք հայցի քո ներողամտությունը, ո՛վ մարդկային անտարբերություն: Կանցնի ևս հարյուր, հազար տարի, միևնույն է,աշխարհը չի փոխվի: Հիսուսին՝ մեր Փրկչին, խաչեցին աշխարհի աչքի առաջ, և ոչ ոք դրա առաջը չառավ: Անտարբե՛ր աշխարհ, մենք կպարտադրենք քեզ՝ հզորների օրենքներին ականջալուր լինեք, և կստիպենք ծունկ չոքել մեկուկես միլիոն զոհերի գերեզմաններին:

Ես կվերականգնեմ նոր Զուղայի հազարավոր խաչքարերը, ձեռքս կպարզեմ փոքրիկ սասունցուն.

-Վե՛ր կաց, լա՛ռ, քելե էրթանք մըր էրգիր…Հայրենիքը կարոտել է քեզ…

Կգնամ Պոլիս, կխոնարհվեմ Դուրյանի տապանաքարին և կասեմ.

-Վե՛ր կաց, հանճարեղ պատանի, գերեզմանների հայրենադարձություն է:

Հայաստա՛ն աշխարհ, քո որդիների վերադարձը բալասան կլինի հարյուրամյա չսպացող քո վերքին:

Հիշում ենք ու պահանջում:

Լիզա ՄԻՐԶՈՅԱՆ
Ասկերանի շրջանի Խնածախի միջն. դպրոցի 9-րդ դաս. աշակերտուհի

100-ԱՄՅԱԿ

ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈԵՄԸ

Մի անգամ պապենական ջաղացներին կարոտած Ավ. Իսահակյանի հետ Հովհ. Շիրազը ծննդավայրից մեկնել էր քիչ հեռու՝ Գյումրի գետի հարավի աղացը, ուր դեռ աշխատում էր Իսահակյանի ազգական Բագրատ Իսակովը: Այս կապակցությամբ արձակ գրված ինքնազրույցում Հովհ. Շիրազը նշում է.« Իրիկնացել էր, երբ ջրաղացի (անեկ) բաղարջն անուշ անելուց հետո Վարպետն ինձ ասաց. «Ելնենք երդիկ, արևի մարվելը տեսնենք»: Մենք բարձրացանք ջրաղացի կտուրը: Ավերակված Անին, պատռտված ծիրանին թիկունքին՝ թագուհու պես մեզ էր նայում հանված աչքերով: Հեռվում, Ախուրյանի վրա ճերմակ շապիկները հանելով, կապույտ էին հագնում Վանանդի լեռները, որոնց վրայով դեպի այն կողմ մայրամուտ էր իջնում արևի ոսկեգույն սկավառակը: Երկար լռում էինք: Այս անգամ Վարպետն ինքն էր արևածաղիկ դառել: Մանուկի նման ակնապիշ լռություն էր բռնում շուրթերին, բայց աչքերն արևի հետ էին. կարծես վախենում էր, թե արևն էլ ետ չէր գալու: Մենք ոգիացած էինք: Երբ մի անգամ էլ դարձանք դեպի Անիի պարիսպները, Ավետիքն ասաց.«Շիրազ ջան, Օհաննեսն ուզում էր, բայց չհասցրեց, քանի որ դու էլ Օհաննես ես, այն էլ դեռևս մատաղ աղբյուր, մտածիր մի պոեմ գրել Անիի մասին»: Ես ասացի. «Վարպետ, մտքիս մեջ ոլորում եմ վաղուց, մանավանդ, երբ կարդացի քո հուշերը Թումանյանի մասին, ուր հիշվում է, թե Թումանյանն ուզում էր պոեմ գրել Անիի Օհաննես Սմբատ թագավորի կյանքից: Ահագին էլ գրի եմ առել: Թումանյանը չէր կարող գետնաքարշ որսի վրա գնալ» (Հ.Շ., Մի փետուր իմ արծիվ կյանքից, Ե., 1984թ., էջ 58):

Հանճարեղ ստեղծագործող Հովհ. Շիրազի՝ մոտավորապես երեք հարյուր էջի հասնող «Անի» պոեմը գրվել է նախորդ դարի կեսին, բայց հրատարակվել է 2011 թ. (կազմող՝ Աստղիկ Կարապետյան (Շիրազ), խմբագիր՝ Ս. Մուրադյան) և ունի երեք մաս՝ քսանչորս գլուխ: Հայ ժողովրդի մի մասն այդ գործին իրազեկվել է 2012 թ. (մի մասն առ այսօր գաղափար չունի. վաճառքը՝ ներկա սովորական պատվերային): Պոեմի մուտքը դառնում է Անիի պարսպադառանը քանդակված խորհրդանշական «...իմաստուն առյուծի ահեղ մռնչյունը՝ ծնված կարոտի կսկիծից և դարավոր անզորության զգացողությունից» (Ս. Մ. Մխիթարյան): Այդ պարսպի առհավատչյա խորհրդանիշ քանդակը տաղանդաշատ ճարտարապետ, հզոր ու անմահ Տրդատի, ճարտար շինարարների և հայ ժողովրդի արդյունքն է:

Որպես քարացած աղոթքներն Հայոց, Հայոց մեղեդիք...
Անին քարացած երաժշտություն՝ հասած մինչ երկինք (էջ 36):

Բանաստեղծի խոր մորմոքն հազարամյա վիրավոր մայրաքաղաքի նկատմամբ անչափ էր, որովհետև չուներ անգամ մի թռչունի իրավունք, որն ազատ թևածում է հայոց երբեմնի փառքի քաղաքում, որտեղ ուզում՝ նստում: Այդտեղ եղած հայկականը անգթորեն թալանված, սեփականացված, հոշոտված է բարբարոս այլազգու կողմից: Այգաբացը հույս և ուժ էր ներարկել հայրենասեր բանաստեղծի գեղագիտական երևակայությանը: Արդի պայմաններում Հայաստանում հայի խորհրդանիշ դեռ չարմատացած Արագածն այգաբացին արփիազօծ ծիրանի է առաքում Անիի նյութեղեն ավերակներին: Սկսվում է հրաշք զարթոնքը: Հեղինակի գեղագիտական երևակայությունը գործել է ճաճանչված ու երազուն նկարագրությամբ... Քարավանները մեղմահուչ զանգակների ծլնգոցով, հանդարտ ու շորորուն ներս են մտնում Անի: Կյանքը պարիսպներից ներս վերակենդանանում էր: Առանձնանում էին դեռատի հայուհիները, փայլում անզուգական գեղեցկությամբ ու շքեղությամբ: Ահա Տրդատ ճարտարապետի հոյագեղ դուստր Այծեմիկը, որից սքանչացած պարսիկ մի վաճառական մրմնջում էր.

Մի՞թե հայուհիք այսքան չքնաղ են՝ պարսկուհուց էլ վեր (էջ 28):

Սպարապետ Պահլավունին զորքը տանում էր վարժանքի: Մի ծեր կին պատանի թոռանը ստիպում էր համբուրել զորավարի փեշը, որով Հովհ. Շիրազը շեշտում էր ժողովրդի հայրենասիրությունը, զենքի, ուժի պաշտամունքը: Վեհ է անկեղծ ակնածանքն ու հարգանքը հզոր ու վեհանձն ուժի առջև: Գագիկ մեծ արքայի (Գագիկ Առաջին՝ 990-1020) թուլամորթ ու աչքածակ զավակները՝ թույլ թագավոր, հզոր աբեղա Օհանը (Հովհաննես-Սմբատ՝ 1020-1041. Նա գրքի քաջ է և ոչ թե զենքի. էջ 39) և Աշոտը, անհաշտ դիրք են բռնել հայրական գահի համար: Արքաեղբայր Աշոտը խաբեությամբ իր մոտ է կանչում, գերում նորատի արքա եղբորը: Դրությունը փրկում է Պահլավունյաց ազդեցիկ իշխանների միջամտությունը: Ցավով լցված Օհան-Սմբատն իբր վշտից իրեն հանձնում է խմիչքին: Օրհասական վիճակում գտնվող Արևմտյան Հայաստանի հայության ազդեցիկ ներկայացուցիչներն արքայի ոտքերն են ընկել, օգնություն հայցել: Անգամ մեկն իմաստնախոսում էր.

...զորքով գնամ,
Գուցե ազգով վերադառնամ (էջ 57):

Մերժում ստանալով՝ վերջինս ինքնասպան է լինում: Արծրունյաց Սենեքերիմ անարի արքան Վասակ Սյունեցու նման նողկալի արարք է գործում: Այդ անարժան արքան հայաթափել է Վասպուրական աշխարհը, իբր խուսափում էր բյուզանդացիների արյունահեղությունից: Ժողովուրդն արդեն «Կռունկ» էր երգում... Սկսում էր թուլանալ Անին: Նվազում էր առևտուրը: Խուսափում էին անգամ օտար մեծահարուստ վաճառականները: Ծորում էին տխրամած երգերը. « ...Հայոց մուսան հզորանում է, բայց մարում է ռազմական հանճարը, և թուլանում հայի բազկի ուժը» (Ս. Մ. Մխիթարյան):

Մեծ հեղինակը երկրորդ մասում անհիմաստ իմաստնախոս արքայի փիլիսոփայությունն է վերլուծում, որը հայրենիքին փրկություն չէր բերել: Կաթողիկոս Պետրոս Գետադարձը հնազանդություն էր քարոզում՝ դեղ չկա հայոց ցավին: Արքայի կողմից սպարապետ Պահլավունին զրկվում է տիտղոսանիշ մատանուց՝ պատերազմելու իրավունքից: Ճարտարապետ Տրդատը մեկնում է Բյուզանդիա՝ հայկական ծագում ունեցող կայսրի կանչով ու նրան ծառայում՝ շենացնում Կ. Պոլիսը՝ արքայի պալատի կամարը կապում: Դվնո խանն ու արաբ խալիֆը նոր պահանջներ էին դնում: Հայրենյաց հողի ողբը թույլ ու անզոր գուսանի՝ ողբերգուի և մատենագրի աշխատանք էր դառնում: Ահա հզոր Շիրազի բառացի առաջընթացը, որը նաև Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը պոեմում էր արտահայտել.

Ինչպես ասեմ քեզ Հայաստան,
Երբ Տիգրանի դատը չունես,
Երբ գերի են Վան ու Ուստան,
Երբ քո Մասիս սարը չունես (էջ 120):

Վերջին մասում արքան, իր մեղքերը քավելու համար, Անի վերադարձած Տրդատին պատվիրել էր Ախուրյանի ափին Հոռոմոսի վանքը կառուցել: Հովհ. Շիրազը նույնիսկ նկարագրել է անթույլատրելին՝ արքայի պարսկուհի հարճն արքայից պահանջել է մզկիթ կառուցել՝ կրծքի տակ գահաժառանգ կրելու համար: Արքան հարճի երեսին է նետել իր ամլությունը և մահ սպառնացել: Ահազարհուր հարճը խոստովանել էր կեղծիքը: Զայրացած արքան մեկնել է Անիի արքայական գերեզմանոց՝ ննջեցյալ մեծությունների առաջ ապաշխարելու: Հերոսական անցյալի ու թշվառ ներկայի հակադրությունն առավել է սրվել: Կաղնու գետնամած փչակում թակարդվել է ձիու սմբակը: Գեղագիտական պատկերի այլաբերությունը խորացել է: Գերեզմանոցից դուրս են ելել հերոս արքայական ոգիները, պատասխանատվություն պահանջել: Մայրն անեծք է թափել որդու գլխին: Այլընտրանք չուներ պայքարի չելած արքա Օհան-Սմբատը: Անիմաստ զղջում էր ապրում: Բայց սպանել է տալիս հարճ-կնոջը: Սպարապետին սուրը կապել է տալիս և ստիպում ելնել հույների դեմ կռվի, Տեր Պետրոսին կալանավորել տալիս, իսկ ինքը նորակառույց Հոռոմկլայի նորակառույց վանքում՝ Քրիտոսի պատկերի առաջ, վերջ տալիս իր անփառունակ կյանքին: Ժողովուրդն անիծում էր արքային: Քաղաքը շրջապատվում է բյուզանդական զորքով: Հարձակվում էին պարսիկները: Փլուզվում էր նաև վանեցի հասարակ որսկան Վարազիկի ու անեցի Այծեմիկի (Այծեմնիկ) անաղարտ սերը (Այծեմնիկի հերոսական կերպարին ծավալուն անդրադարձել է նաև Լյուդվիգ Դուրյանը): Պետության թշնամիներից բացի ծնվել է ահազարհուրը՝ ԱՐՏԱԳԱՂԹԸ: «Հայկեմ Անին ու նոր մեռնեմ» երազանքը մնացել է մեծ Շիրազի պատգամ-խոսքում, որը նաև հնչեցվել է առավել հնարավոր իրական տեսքով.« Ախ, թեկուզ լուռ, դեռ ավերակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»: Ամբողջ պոեմը կառուցված է շիրազյան պարզությամբ, ավանդական տաղաչափական արվեստով, հանգավորման բարեհունչ համաչափությամբ, նորարարական բառային կառույցներով, տեսլական հնչեղ ու հոգեմոտ նկարագրություններով, գեղագիտական ավանդական և անզուգական պատկերային ու արտահայտչական հնարամտություններով:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. գ. թ., դոցենտ

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

• Ժամանակը ոսկուց էլ է թանկ. կորցրած ոսկին ձեռք կբերվի, իսկ կորցրած ժամանակը՝ ոչ մի դեպքում, ոչ մի կերպ:

• Սեփական ուժերը թերագնահատելը լավ չէ, բայց ավելի վտանգավոր է գերագնահատելը:

• Դարեր շարունակ միլիոնավոր մարդիկ իրենց կյանքը զոհաբերել ու զոհաբերում են հանուն «պայծառ ապագայի», բայց այն դեռ երազանք է:

• Արդարություն մուրալը տարածված ծանր ու տխուր զբաղմունք է, հաճախ՝ նաև անարդյունք:

• Կպատահի՝ ումից օգնություն ես սպասում, թիկունքից նրա հարվածը ստանաս:

• Իրեն լավ մարդ համարողը պետք է լինի ազնիվ, արդար ու հուսալի:

• Նա, ով սևի կողքին գորշը սպիտակ է համարում, սպիտակի արժեքը չի հասկանում:

• Թույլ հակառակորդը, եթե ուժեղ թիկունք ունի, շատ ավելի վտանգավոր է, քան թվում է:

• Լավ մարդիկ նույնպես սխալվում են, կարող է պատահի՝ վատ վարվեն, բայց ստորություն չեն անի երբեք:

• Նեղ դրության մեջ գտնվող մարդը դյուրահավատ է դառնում, շուտ էլ խաբվում է:

• Մարդու իրավունքների, ազատությունների ապահովումով չի երաշխավորվում անձի անվտանգությունը:

• Լավատեսությունն առանց իրատեսության՝ խաբկանք է:

• Պատրանքից ձերբազատվելու կարճ ճանապարհը իրականությանը բախվելն է:

• Այնտեղ, որտեղ պետք է գործել խելքով, ուժով գործելն անօգուտ է:

• Ոմանց համար օրինապաշտություն քարոզելը սեփական օրինախախտումները քողարկելու միջոց է:

• Խորտակվող նավից փրկություն չեն պահանջում:

• Պատերազմով ձեռք բերածը, նույնիսկ հաղթանակը, ոչ մի կերպ չի կարող փոխհատուցել ժողովրդի գենոֆոնդին հատուցված վնասը, կորուստը:

• Ականջի խլությունից ավելի վտանգավոր է հոգու խլությունը;

• Մինչև սեփական ատամը չցավի, չես իմանա, թե ինչ բան է ատամի ցավը:

• Ազնիվ մարդու համար ամենամեծ վիրավորանքը անազնվության մեջ անհիմն մեղադրվելն է:

• Հիմարություն ասող մի հիմար միշտ կգտնվի, այն հերքելու համար խելոք գտնելն է դժվար:

• Ոմանք համառորեն երջանկություն են որոնում այնտեղ, որտեղ անհաջողություն, դժբախտություն է սպասվում:

• Երբ Աստված մեկին զրկում է բախտից, փոխարենը կրկնակի համբերություն է պարգևում:

• Մի օր խելոք մարդու գլխին էլ կարող է հիմարի բռունցք հայտնվել:

• Կպատահի՝ Աստծո ծառաների մեջ էլ անաստվածներ լինեն:

• Ի սկզբանե անարդար է, երբ մեղավորների մեղքերի համար զոհ են դարձրել անմեղներին:

• Գեղաշուք ծաղկեփունջը թառամելուց հետո անտարբերությամբ է աղբանոց նետվում. այդպես վարվում են երբեմն զորությունը կորցրած, ծերացած մարդու հետ:

• Ամեն մարդ իր հոգում թեկուզ փոքր, մի գեղեցիկ «աշխարհ» պիտի ունենա, որի համար արժե ապրել, մաքառել:

•Համատարած խավարի մեջ մի մոմն էլ լուսառատ ջահ արժե:

ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շուշիի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը(ԵՄԱՈՒ) հայտարարում է 2015 -16 ուստարվա ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում
- Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ
- Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում
- Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում

Ուսումնարանը ապահովված է հանրակացարանով,ճաշարանով, լիարժեք սարքավորված արհեստանոցներով, համակարգչային լսարաններով, գրադարանով, մարզասրահով և սպորտային հրապարակով:

Ուսումնարանի արտադրական ուսուցման վարպետները և տնօրինությունը վերապատրաստվել են ֆրանսիական արհեստագործական ուսումնարաններում և շինարարական ընկերություններում:

Ուսումնարանի սովորողները սովորելուն զուգահեռ աշխատելու են շինարարական ընկերություններում, ստանալու են պետական կրթաթոշակ և աշխատավարձ:

Ընդունելությունը կազմակերպվում է 9-ամյա կրթության հիմքի վրա՝ անվճար հիմունքներով:

Ուսման տևողությունը 3 տարի է, շրջանավարտներին տրվում է պետական նմուշի դիպլոմ:

Դիմումներն ընդունվում են սույն թվականի հունիսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00:

Դիմումների համար այցելել՝ ք. Ստեփանակերտ , Թումանյան փ. 62 ,
ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, 2-րդ հարկ, 3-րդ սենյակ:
Մանրամասների համար զանգահարել՝ (097) 35 71 93, (097) 12 62 76

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- **դիմում (լրացվելու է տեղում)**
- **3 x 4 չափսի երկու գունավոր լուսանկար (վերջին մեկ տարվա)**
- **ավարտական վկայականը (բնօրինակը)**

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.05.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: